

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԱՅԼ ԲԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

✽ ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

1.

Ըստևած է, եւ արդարօրէն, թէ բոլոր պատմաբաններն ալ քաղաքագէտ չեն, այսուհանդերձ՝ կա՛ն քաղաքագէտներ, որոնք պատմաբան են նաեւ: Պատմաբանը կը վերլուծէ եւ կ'արձանագրէ պատահարները պատմութեան, մինչ քաղաքագէտն ընթացք կու տայ անոնց: Արարքին առաքելութեան այս անհամատեղելիութիւնն է որ կը զանազանէ զանոնք, ի՞նչ փոյթ որ անոնք մերթ ըլլան միեւնոյն անձը, միեւնոյն անհատը, եւ իրենց վստահուած կամ իրենք իրենց տուած իրենց պաշտօնն ու առաքելութիւնը կատարող միեւնոյն մարդը: Զանոնք իրարմէ տարբերող եւ իրարմէ տարանջատ երկու անհատականութեան վերածող գիծն անոնց միջեւ չի գար անոնց պաշտօնէն ու դիրքէն եւ այդ վերջիններուն վստահուած առաքելութենէն՝ այլ մանաւանդ՝ այդ առաքելութիւնն ու արտայայտութիւնն ընթացքի մէջ պահող անոնց հոգեկան եւ իմացական կազմաւորումէն եւ իրողական դրութենէն: Նոյնիսկ երբ միեւնոյն անձէն ներս են մարմնաւորուած էութեանական անկախ աշխարհները քաղաքագէտին եւ պատմաբանին՝ անոնք տեղ մը կը բաժնուին եւ կը հեռանան իրարմէ իրենց առօրեային եւ կեանքի դրսեւորումին մէջ եւ յաճախ կը ներկայանան որպէս իրարմէ տարբեր եւ իրարու հակադիր ճշմարտութիւններու եւ նպատակներու հետեւորդներ: Այսուհանդերձ, ինչ որ ալ ըլլայ իրականութիւնը, ինչպէս կը դնէ Ճեֆրի Պարաքլոն, պատմաբանին գործն է կապտել անհատականութեան ամէն գոյն ու երանգ, եւ ստուեր ու թերաստուեր, եւ հետաքրքրուիլ նուազագոյն մանրամասնութեամբն իսկ քննութեան առնուող դէպքին կամ պատահարին: Այսպէս ընելու համար անիկա՞ պիտի ունենայ «մարզուած պայծառ ներհայեցողութիւն թափանցել կարենալու համար

պատմական տուեալներու բեկորային իրողութեան կեղեւէն ներս եւ արտահանելու անկէ ներս պահուած իրականութիւնը. իսկ այս բոլորէն ետք՝ պատմաբանին հիմնական առաքելութիւնն է պատմել զէպքը եւ ոչ թէ ընդհանրացնել զայն եւ քարոյական դասեր քաղել անկէ»¹:

Իրականութեան մէջ՝ պատմաբանին տրուած այս առաքելութեան հիմնովին հակադրուելու կու գայ քաղաքագէտինը: Քաղաքագէտը որ դիւանագէտն է նաեւ² պիտի որոշէ եւ զծէ նպատակներն իր առաքելութեան՝ անոնց իրագործումին համար առկայ եղող իրողական եւ կարելի ուժերու լոյսին տակ: Այսպէս ըրած միջոցին՝ անիկա պիտի նկատի առնէ եւ գնահատումի ենթարկէ նպատակներն այլ ազգերուն եւս եւ իրողական ու կարելի այն ուժերը՝ որոնք իրագործելի պիտի ընծայեն այդ նպատակները: Ապա անիկա պիտի որոշէ թէ մինչեւ ո՞ր աստիճան իրարու կը համընկնին իրարմէ տարբեր եւ յաճախ իրարու հակադրուող այս նպատակները, եւ հուսկ՝ որոշէ թէ ի՞նչ միջոցներ պիտի օգտագործուին հետապնդումին եւ իրագործումին համար այս նպատակներուն³:

Իրաւ են այս բոլորը, այսուհանդերձ ըսուած է եւ կ'ըսուի տակաւին, թէ քաղաքագէտ չէ պատմաբանը, սակայն կան պատմաբաններ, որոնք քաղաքագէտ են նաեւ:

2.

Քաղաքագէտն է որ կը փորձէ տալ ձեւի ու կերպարանքի, եւ որակի ու քանակի դրսեւորում լաւ կամ վատ, դրական կամ ժխտական, եւ յաճախ իրարմէ անջատ ինկած եւ մերթ իրարու հակադրուող կամ հակադիր թուող զէպքերուն, եւ վերլուծումի ու քննութեան ոսպնեակէն անցընելէ ետք զանոնք՝ կը կշռէ, կը դատէ, կը բաղդատէ, կիզակէտի մը վրայ կը կեդրոնացնէ անոնց յայտնի ու թաքուն բոլոր տուեալները, կը մաղէ, կը կատարէ կարելի ընտրութիւնը, կը բիւրեղացնէ անոնցմէ քաղուած եզրակացութիւնները, եւ իրենց լրումին հասցնելէ ետք քաղաքագէտի եւ դիւանագէտի իր հիմնաւորումները՝ կը զծէ ընթացքն իրագործելի յայտագիրի մը, որ նպատակն է արդէն: Առ այդ՝ իրապաշտ մարդն է անիկա եւ նոյնքան մը իրապաշտ ղեկավարը նաեւ⁴: Անկէ ետք զէպքերուն, այսինքն՝ կեանքին ընթացքը կը ղեկավարուի առարկայական օրէնքներով, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս որ պիտի ղեկավարուի ընկերութիւնն ընդհանրապէս, եւ որոնք իրենց արմատներն ունին ընութեան մէջն իսկ մարդերուն: Եւ այս ընթացքին մէջ՝ անիկա իրեն հիմնական օժանդակ պիտի գտնէ ուժի եւ կարողականութեան տուեալներով տարագուող իմացական յղացքներ: Այսուհանդերձ եւ հակառակ որ որպէս ուժ տարագուող հիմնական այս յղացքը կը

ներկայացնէ տիեզերական արժէք ու կշիռ՝ դիւանագիտական ու քաղաքական յայտագիր մը իրագործելու կոչուած ղեկավարը հաստատուն եւ անփոփոխելի ոչ մէկ իմաստ պիտի պարզեւէ որեւէ յղացքի: Սա մէկն արդէն կը նշանակէ, որ անիկա պիտի ըլլայ ճապարակ եւ պայմանները առարկայօրէն դասաւորող, ի՞նչ փոյթ որ գիտակ է արարքին բարոյական ներքին արժէքին եւ իմացքին: Աւելին՝ անիկա գիտակ է նաեւ, որ տիեզերական եւ բարոյական սկզբունքները չեն կրնար գործադրուիլ պետութեան մը գործունէութեան ընթացքին իրենց տիեզերական եւ վերացական տարազումով, այլ, ընդհակառակը, անհրաժեշտ է որ գտուին եւ մաղէ անցուին ժամանակի եւ վայրի թանձր պայմաններով: Այս իսկ պատճառով քաղաքագէտ—դիւանագէտը պիտի մերժէ նոյնացնել ազգի մը, ժողովուրդի մը, հաւաքականութեան մը բարոյական իղձերը բարոյական այն օրէնքներուն հետ որոնք կը ղեկավարեն տիեզերքը, եւ այս մէկը՝ այն յստակ գիտակցութեամբ թէ իրենինէն տարբեր կան քաղաքականօրէն կազմակերպուած այլ կարծիքներ, այլ միտքեր եւ ծրագիրներ, որոնց հետապնդումին են յանձնառու իրեն նման այլ մարդեր, քաղաքագէտներ, դիւանագէտներ եւ առաջնորդներ⁵:

Իրաւ է, որ ի վերուստ տրուած շնորհներ չեն ղեկավարի մը ստորագում պարզեւող նկարագրային այս տուեալները: Անոնք որքան որ արդիւնքն են կրթանքին եւ ուսումնառութեան՝ նոյնքան նաեւ հետեւանքն են դարերու ընթացքին առկայութեան կոչուած իմացական հասունութեան, որուն հիմնաւորումին համար որքան որ անհրաժեշտ են մարդկային հոգեկան, իմացական եւ բարոյական առաւելութիւններ՝ նոյնքան նաեւ ֆիզիքական, աշխարհագրական, ընկերային, տնտեսական, ազգային եւ նոյնանման այլ պայմաններ:

Բայց քաղաքագէտը յայտագիրի մը մարդն է, այսինքն՝ ժամանակաւորին, սահմանաւորին, քանակականին: Անիկա ունի շարժումի իր չափերը, իր մղոնաքարերը, իր արգելակումները, որոնք որքան որ իրն են՝ նոյնքան նաեւ իրեն կը պարտադրուին ուրիշներէն, իր նմաններէն, անոնց ներկայացուցած հաւաքականութիւններուն ուժի քաղաքականութենէն, ուժի եւ անոր յենած անոնց շարժումներէն եւ պարտադրանքներէն, մինչդեռ շարժումի ազատութեան մէջ իր հակոտնեան է պատմաբանը, որ ղէպքերն ու պատահարները կը զօղէ իրարու, եւ կը փորձէ անոնցմէ ստեղծել առկայ այլ թաքուն եւ պարզ անհատին կողմէ յաճախ աննշմար մնալու սահմանուած շարունակականութիւնն անոնց, այսինքն՝ պատմաբանն է որ կ'որոնէ, կը գտնէ, կը դասաւորէ ու կը դրսեւորէ պատճառականութիւնն եղածներուն եւ պատահածներուն: Քաղաքագէտին համար, ի նպաստ իր ժողովուրդին եւ պետութեան, լուծելի խնդիր մըն է որեւէ անջատ ծրագիր, որ իրագործուելէ ետք է որ պիտի զգենու «ղէպք» կամ «պատահար»

ըլլալու իրաւութիւնը, մինչ պատմաբանին համար անիկա հետեւանքն ու արդիւնքն է զինք նախորդող այլ խնդիրի մը կամ խնդիրներու գումարին:

Իսկ պատճառականութիւնը ծնունդն է զինուորական ու ռազմական, տնտեսական ու մշակութային, կայսերապաշտական եւ ճարտարարուեստական, հոգեբանական եւ իմացական, կրօնական եւ ընկերային ախորժակներէ եւ իրարու հակադրուող շփումներէ եւ խարտոցումներէ յառաջացած իրավիճակներու յաջորդականութեան:

3.

Պատմութիւնն իր ընդհանրութեան մէջ կեանքին արտայայտութիւնն է հաւաքականութեան մը, զոր հազիւ թէ կարելի է տեսնել որպէս ամբողջականութիւն եւ ապրող, շնչող ու տեւող իրականութիւն, սակայն հաւաքականութիւնը կազմող անհատ մարդը չէ որ հեղինակն է վաղուան հրետակուելիք պատմութեան: Անհատը գործօտ տարրն է հաւաքականութեան մը, բայց երբեք հաւաքականութիւնն ինք: Ընդհանրութեան մը ստորոգումը չունի եւ չի ներկայացնէր անհատը, ի՞նչ փոյթ որ մերթ իր ուսերուն կրէ պատմուճանն անոր: Մեր մէջ չեն պակսիր իրենց ժողովուրդին, ազգին եւ այլատեսակ հաւաքականութեան անունով բարբառողներ, իրենք զիրենք անոնց հետ զուգակշիռի բերողներ, եւ նոյնիսկ անոնց առկայութիւնն իրենց առկայութեամբ դրսեւորողներ: Անջատ եւ մերթ իրարու հակադիր յղացքներ են «անհատ»ն ու «հաւաքականութիւն»ը, մէկը՝ մէկութեան եւ միւսը՝ բազումին արտայայտութիւնը որպէս: «Քանակականէն անդին թուականի այս իրողութիւնն է որ կը տարբերակէ զանոնք եւ կը զատորոշէ՝ հակառակ որ մէկը կայ միւսին մէջ, եւ միւսը, ոմանց համար գոնէ, յոգնակերտումն է մէկուն: Այսուհանդերձ՝ անհատի եւ հաւաքականութեան զուգորդումովն է որ գոյութեան պիտի կոչուի պատմութիւնը, որ իր համապարփակ եւ ընդհանրական բնոյթովն իսկ իրմէ ներս պիտի տարրալուծէ եւ տարբադադրէ անհատականութեան ամէն տուեալ եւ քիչ մը ամէն անհատականութիւն, ի՞նչ փոյթ որ պատմութիւնը յաճախ դրսեւորումն է անհատներու կեանքին եւ անով արտայայտութիւն գտնող ժամանակին: Իրականութեան մէջ՝ կեանքն իր անհատականութեան մէջ կեանքը չէ անհատին, եւ այդ իսկ պատճառով՝ անհատի մը կեանքին անջատ պատմութիւնը պատմութիւնը չէ ընդհանրական ձեւով դրսեւորում եւ արտայայտութիւն գտնող հաւաքականութեան մը, զոր մերթ կը կոչենք ժողովուրդ, եւ երբեմն՝ ազգ⁵:

Քչիկ մը աւելի խորացում, սակայն, «ազգ» բառով դրսեւորուող յղացքի վերլուծումին մէջ՝ մեզ պիտի տանի այն եզրակացութեան, թէ «ազգ

մը որպէս այդպիսին՝ յստակ է որ փորձառական բան մը չէ: Ազգ մը որպէս այդպիսին՝ չի տեսնուիր: Անոնք որոնք փորձառական կերպով կըրնան տեսնուիլ՝ անհատներն են միայն, որոնք կը պատկանին ազգի մը: Ահա թէ ինչո՞ւ ազգ մը վերացականութիւնն է որոշ թիւով անհատներու, որոնք ունին նկարագրային կարգ մը հասարակաց գիծեր, եւ նկարագրային այս գիծերն են որ զանոնք կ'ընծայեն անդամները նոյն ազգին: Բացի ազգի մը անդամն ըլլալէ եւ առ այդ մտածելէ, զգալէ եւ գործելէ՝ անհատը կընար պատկանիլ եկեղեցիի մը, ընկերային կամ տնտեսական դասակարգի մը, քաղաքական կուսակցութեան մը, ընտանիքի մը, եւ կընայ մտածել, զգալ ու գործել առ այդ»⁷:

«Փողովուրդ» եւ «ազգ» յղացքներն են որ կը կազմեն հիմնատարտակը «պատմութիւն» յղացքին, եւ բովանդակութիւն, որակ, իմաստ ու ձեւ կ'ընծայեն անոր:

Չկայ պատմութիւն առանց առկայութեանը փողովուրդի մը կամ ազգի, որ նախապայմանն է անոր գոյութեան կոչուելուն: Ամէնէն վերացականն իսկ կեանքի արտայայտութիւններուն, այսինքն՝ նոյնիսկ իմաստասիրութիւնը, կ'ենթադրէ առկայութիւնն անոր: Իսկ չկայ փողովուրդ կամ ազգ առանց առկայութեանը ժամանակին եւ վայրին, որոնք իմացական մարզանքներու եւ խորացումներու որպէս դրսեւորում կընան տարազումի ենթարկուիլ անմիջական մեր հասկացողութենէն դուրս այլ ընկալումով նաեւ: Ի՞նչ որ ալ ըլլայ իրականութիւնը սակայն՝ պատմութիւնն ընդհանրական եւ ամենապարփակ մէկ արտայայտութիւնն է այս բոլորին, այսինքն՝ գիտակցուած եւ գիտակից այն կեանքին, որուն շունչ ու հեւք, եւ բովանդակութիւն ու իրաւութիւն տալու կու գան անհատն իր հաւաքական ստորոգումով, վայրն իր տարածքային բնոյթով եւ ժամանակն իր տեւականութեամբ:

4.

Պատմարանը հաւաքական խիղճն է փողովուրդի մը, եւ առ այդ՝ իրմէ ներս ամփոփած ունի ժամանակի ընթացքին կուտակուած զգայնութիւնն ու զգացումները, կեանքի ընկալումն ու ապրումները, եւ մանաւանդ բարոյական արժէքներու գիտակցութիւնը. այսուհանդերձ՝ հաւաքական խիղճ մը չէ փողովուրդը ճիշդ այնպէս՝ ինչպէս որ հաւաքական բարոյականութիւն մը չէ անորը: Պատմութեան ամբողջ տեւողութեան եղեր է ոչ մէկ պահ, երբ առկայութեան է կոչուեր հաւաքական խիղճ մը: Իրականութեան մէջ՝ ինչ որ կը կոչենք որպէս այդպիսին՝ ընդհանրական ընծայուած արտայայտութիւնն է անհատ մարդերու համոզուածութեան, որ

երբեք ալ չունի մնայունի հանգամանք: Փոփոխականութեան նկարագիր մը արտայայտող խղճմտանքի մը այս զգայնութիւնը, անկէ յառաջացած զգացական դրութիւն մը, եւ անոր վերբերումն եղող համոզուածութիւնը եւ առ այդ՝ խիղճի եւ զգացողութեան միասնականութիւնը չեն որ, սակայն, պիտի կարելի ընծայեն յառաջընթացը համապարփակ խիղճի մը: Պատմաբանը վեր է անհատէն եւ անհատականէն՝ եթէ ունի բարոյականութեան ատաղձ եւ բանասիրական զգայնութիւն, եթէ կողմ չէ ի յառաջագունէ, եւ ղէպքերուն ու պատահարներուն, որոնք երէկն ու անցեալն են անպայման, կը մատչի քիմիագէտի մը բժախնդրութեամբ եւ տարբարանի մը գիտականութեամբ: Պատմաբանն ու բանասէրն այն անհատներն են, որոնք որպէս անհատանելի մէկ մասնիկն իրենց գոյութիւն եւ իրաւութիւն պարզեւող ժողովուրդին՝ պիտի իրենց ասիերուն մէջ հաւաքեն եւ սիրտին, միտքին ու հոգիին մէջ ամփոփեն անոր այսօրը, երէկը եւ վաղը, տան զանոնք դատի ու դատաստանի, յանձնեն բովին կարելի ամէն ձեւի նժարումի, եւ ապա անցընեն զանոնք անբեկանելի վճիռէ, միշտ ալ հաւատարով որ «պատմութիւնը համադրումն է սկզբունքներու եւ փորձութիւններու» եւ անոր հետ՝ պատմագրութիւնը նաեւ⁸:

5.

Բայց չկայ անբեկանելի վճիռ, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ չկան վերջնական դատ ու դատաստան: Բոլոր վճիռներն ալ կ'իյնան պայմաններու եղանակաւորումին ներքեւ, զանոնք՝ այդ վճիռները ձեւակերպողին եւ արձակող անհատներու հոգեկան եւ իմացական, ընկերային ու կրօնական, տնտեսական եւ քաղաքական փոխյարաբերութիւններուն, եւ նոյնիսկ լեզուական եւ արտայայտչական դրսեւորումին, եւ առ այդ՝ կը մնան փոփոխական եւ փոփոխելի: Անոնք արտայայտութիւնն են տուեալ ժամանակի մը եւ տուեալ վայրի մը մէջ այդ ժամանակի ընթացքին առկայութեան կոչուած իմացական իրողութիւններու եւ ճշմարիտի ընկալումին, որ չունի նկարագիրը մնայունին եւ անփոփոխին: Իրականութեան մէջ՝ ինչպէս կը տարագէ Չարլս Փիրսը՝ ճշմարտութիւնն ան է, որուն կը համաձայնին բոլոր զայն որոնողները⁹, եւ որո՞վհետեւ մարդկային նկարագիրին միակ եւ անփոփոխ գիծն է փոփոխականութիւնը՝ ուրեմն կը հետեւցուի թէ «անփոփոխ» ճշմարտութիւնը կը կենայ իմացքին վրան փոփոխականութեան, որուն հիմ ծառայելու պիտի գայ յղացքը անհատական թէ հաւաքական իրաւունքին:

Իրաւունքի վերջին սա ստորագումը՝ հաւաքականը իրեն հետ կը տանի պետականութեան եւ իշխանութեան մը ընկալումին նաեւ:

Հակառակ որ ժամանակի ամբողջ ընթացքին մարդեր միշտ ալ խօսեցան իրաւունքի մասին եւ ազատութեան՝ այդ վերջինները հազիւ թէ եղան անխափան բաժինը հաւաքականութիւնը կազմելու եկող անհատ մարդերուն: Ինչպէս անհատն անհատին՝ այնպէս ալ տեղ մը իրարու դէմ կեցան անհատն ու հաւաքականութիւնը եւ հանդիպակաց կողմերէն դիտեցին զիրար՝ անտեղիտալի վճռակամութեամբը իրաւունքի եւ ազատութեան¹⁰:

Իրաւ է, որ կա՛ն անհատական եւ հաւաքական իրաւունքներ եւ միշտ չէ որ անոնք կը համընկնին իրարու: Իրականութեան մէջ՝ հաւաքական եւ հանրային իրաւունքն ու ազատութիւնը կը մնան վեր անհատէն եւ կ'ենթադրեն անոր ենթարկուածութիւնն իրենց: Անհատն իր գոյութեանն իսկ իրողութեամբ՝ անհատանելի եւ անմերժելի մէկ մասնիկն է հաւաքականութեան, որուն, սակայն, անդիմազիժ մէկ մասնիկն է միայն: Պատմութիւնը, որ ըստ ոմանց կը կերտուի կեանքովն իսկ անհատ մարդերու եւ առ այդ՝ լոկ անջատ ինկած կենսազրուցիւնն է անոնց՝ կը խօսի հաւաքականութեան մասին եւ այլ հաւաքականութիւններու հետ ունեցած անոր առընչակցութիւններուն եւ յարաբերութիւններուն, ի՞նչ փոյթ որ այդ բոլորին կու գայ ընդխառնուելու անհատն ալ որպէս հաւաքական անձնաւորութիւն՝ երբ իշխանաւորութեան եւ իշխանութեան մականն է անոր ձեռքին: Երբ պատմութիւնը խօսի լոկ անհատին մասին եւ անոր իրագործունեան կ'ընծայուի կենսազրուցիւնն անոր: Սակայն պատմաբանը կենսազիր մը չէ բնաւ, ի՞նչ փոյթ որ հաւաքականութեան մը պատմութեան արձանագրութեան ընթացքին անիկա աղերս ունենայ անհատին հետ եւ անհատներուն: Հետաքրքրական է, այսուհանդերձ, որ պատմաբանը կենսազիր մըն է մերթ եւ մանրակրկիտ ու մանրազնին քննիչը անհատին ինքնուրոյն կեանքին եւ առօրեային, գործունէութեան եւ արարքներուն: Պատմաբանը կը դասէ եւ կը դասաւորէ անհատականէն վեր առկայ հաւաքականը եւ ընթացք եւ ուղղութիւն կու տայ անոր ընդհանրացումին եւ հաւաքական դրսեւորումին, որուն ընթացքին է որ անհատը դուրս կը բերէ ընդհանուրէն եւ հաւաքականէն եւ կիզակէտի կը հասցնէ անոր անձնական եւ ընկերային, քաղաքական եւ իմացական, եւ ընդհանուրին մէջ եզակի կերպով դրսեւորուող անձնական կեանքը:

Միշտ չէր որ իրաւունքի եւ ազատութիւններու մասին բարբառողներ կարողացան հաշտուիլ անոնց ներկայացուցած ալլազան ընկալումներուն եւ տարազումներուն հետ, սակայն մերթ, եւ հակառակ ալ անոնց անտեղիտալի ու կարծր կեցուածքին, այդ բոլորն անցաւ թուղթին եւ ընծայուեցան օրէնքի: Իրականութեան մէջ, ինչպէս կը հաստատէ Ճոն Տիուին՝

«օրէնքը ամէնէն պահպանողականներէն մէկն է մարդկային հիմնարկներուն, սակայն օրէնագիտութեան եւ արդարագատութեան որոշումներուն յարաճուն ազդեցութեան ներքեւ անիկա կը փոխուի մերթ դանդաղ եւ երբեմն արագ կերպով»¹¹:

Այսօր նուազագոյն մատչումն իսկ ազատութիւններուն եւ իրաւունքներուն՝ պիտի ցոյց տար այլազանութիւնն ու տեսակաւորութիւնն անոնց: Այսպէ՛ս է որ այժմ անոնց անհատականին հետ եւ հաւաքականին՝ անհրաժեշտ է վերլուծումի սեղանին բարձրացնել անոնց ազգայինն ու միջազգայինը, հանրայինն ու ընդհանրականը, բնականն ու բնագանցականը, կրօնականն ու եկեղեցականը, փոփոխականն ու յաւիտենականը, եւ այդ վերջիններէն յառաջացած ու գաղափարէն կաղապարի վերածուած եւ բրնտութեամբ պարտադրուած կամ համոզումով ընդունուած հաստատումներն ու հրահանգները:

Ի սկզբանէ՛ ո՛չ մէկ օրէնք է սրբազան եւ մնայուն սակայն: Օրերու հոյովոյթով փոփոխուող մարդն է գուգակչիուն անոր: Օրէնքը կը քայլէ մարդուն հետ եւ անհատին եւ կը շրջափոխուի պահանջին հետ օրուան ու ժամանակին: Զանազան որակի, խորքի, տարածքի եւ արտայայտութեան կրթութանքները, իմացական եւ հոգեկան յղացքները, մարդկային անհատական թէ՛ հաւաքական առընչութիւններէն յառաջացած զարգացումը եւ իմացական խորացումները, եւ գիտութեան ընձեռած նորարարական յաւելումն են այն ուժերը, որոնք սահման ու սահմանաւորում զգեցած բովանդակութիւնը օրէնքին պիտի վերածեն սահմանամերժ եւ գոզցես անկայուն ընծայուած եւ անփոփոխելիութեան կաղն ու կաղանքը ունեցող տարազումի: Անփոփոխ օրէնք մը որքան որ ալ ըլլայ նորօրեայ եւ արդի պահանջներու գոհացում պարգեւող՝ իր նկարագիրին իսկ հաստատումով պիտի դառնայ ուղին լծացումին եւ ի վերջոյ պիտի տանի քայքայումի: Իսկ լծացումն ու քայքայումը մահացումն են անհատ մարդուն հոգեկան եւ իմացական ներքին մեհեաններուն հետ կառուցին անով եւ իր նմաններով կազմուած հաւաքականութեան:

Օրէնքը կաշկանդումն է չափ ու կշիռ մերժող ազատութեան, եւ այդ իսկ պատճառով՝ իրաւունքին: Մարդկային օրէնքներով գոյութեան կոչուած եւ ձեւ ու մարմին ստացած իրաւունքներէն եւ ազատութիւններէն դուրս տիրական են անտառին օրէնքը, բնազդին գործունէութիւնը, անհաշիւ շարժումը, զօրաւորին եւ ուժեղին տիրակալական ախորժակները, անհատին տրորումն ու ճնշումը, այսինքն՝ ոչնչացումն ու չքացումը: Երբ չկայ անհատը, այսինքն՝ երբ առկայութենէ՛ զաղրած է անհատականութիւնն անոր եւ անհետ կորսուած ինքնութեան ու եսի ամէն ջիղ եւ հիւսկէն՝ արգէն իշխանութիւնն է քառսին եւ տիրութիւնը անոպայութեան, բրտութեան եւ անմարդկայնութեան: Արդարեւ՝ լիբանանցի Ճպրան Խա-

լի ձայրանն է, որ երբ կը փորձէ քննութենէ անցընել «օրէնք» եւ «ազատութիւն» կոչուած այս յղացքները՝ կը գտնէ որ «օրէնքները մասնիկներն են մարդկային էութեան»․ իրականութեան մէջ «եթէ անարդար օրէնք մըն էր անիկա զոր պիտի ուզէիք ջնջել՝ անիկա ձե՛ր իսկ ձեռքով էր գրուած ձեր ճակատին»։

«Կրնաք աւելի գայն ո՛չ ձեր օրինագիրքերը վառելով եւ ոչ ալ լուալով ճակատները ձեր դատաւորներուն՝ եթէ նոյնիսկ ծովը թափէք անոնց վրայ»։

«Ու եթէ բռնակալ մըն է անիկա, զոր պիտի ուզէիք գահընկէց ընել՝ նայեցէք որ նախ կործանի ձեզմէ ներս կանգնած գահն անոր»։

«Որովհետեւ բռնակալ մը ի՞նչպէս կրնայ իշխել ազատին վրայ, եւ հպարտին՝ եթէ չկան բռնութիւն անոնց ազատութեան եւ ամօթ՝ հպարտութեան մէջ»¹²։

Այսինքն։ Այսինքն՝ ազատութեան եւ օրէնքի փոխյարաբերութեան մէջ հիմնական կը մնայ մարդը եւ ինչպէս որ կը հաստատէ Ֆրիտրի Հեկէլը՝ մարդն ինքնին գոյացական առարկայ մըն է իրմէ ներս գտնուող աստուածային շնորհքով եւ այն ինչ որ տրամաբանութիւն կոչուեցաւ իր գոյառումի առաջին իսկ օրէն՝ իր գործօնութեանն եւ ինքնորոշումի ուժին միջոցով կոչուեցաւ ազատութիւն»¹³։

Եթէ այսպէ՛ս է իրողութիւնը՝ այն ատեն անհատին համար անհրաժեշտ կը դառնայ դասել ու դասաւորել ընթացքը կեանքին, սահմանել ու տարազել օրէնքները, սահմանել ու սահմանաւորել ազատութիւնները եւ անոնցմէ յառաջացած իրաւունքները, անոնց հետ զուգընթաց յառաջացող եւ անոնցմէ իսկ ծագում առած պարտաւորութիւնները, եւ ինքզինք զետեղել այդ բոլորին խաչածեւ քառուղիներուն վրայ՝ անոր տալէ ետք օրէնքի, իրաւունքի եւ ազատութեան յղացքներուն եւ գործելիութեան ընկալումին համար որոշ ճկունութիւն եւ շարժունակութիւն, որովհետեւ որեւէ ժամանակէ աւելի այսօ՛ր է որ գիտենք, թէ յարտաքոյ օրինաց՝ չի՞ք ազատութիւն եւ իրաւունք։

7.

Պատմութիւնն արձանագրութիւնն է եղածին՝ անոր ժխտական թէ դրական գրսեւորումով։ Լո՛կ լաւին, դրականին եւ հաճելիին արձանագրութիւնը առաջին քայլն է պատմութեան գիտակից եւ կամաւոր խեղաթիւրումին եւ ծածկելու փորձ մը կորանքները հաւաքականութեան կամ գայն առաջնորդելու կոչուած անհատին․ անոնցմէ անդին փոքրագոյն ոս-

տումն իսկ բաւ է խրելու համար ճահիճէն ներս նենգին, կեղծին եւ սուտին:

Պատմութեան ընթացք տուող ուժերուն մէջ միշտ չէ որ լաւն ու դրականն են դեկավարները հաւաքականութիւններուն: Իրականութեան մէջ՝ առաջնորդութիւն մը որ հիմնուած կը մնայ լոկ զգայնութեանն ու կամքին վրան անհատին՝ պիտի տանի երեւակայականին եւ երեւակայուածին, թափ տայ անհատին ուշ եւ ուրուշին չեղածը եղածի պէս եւ անգոն գոյի նման տեսնելուն, եւ զայն առաջնորդէ երազանքի լայնարձակ եւ հեռուները տանող ճանապարհներէն, ցնորքէ ցնորք, եւ մինչեւ սահմանները անիրականին: Երազապաշտութիւնն ու ցնորամտութիւնը ծնունդն են անսանձ երեւակայութեան, եւ անոնք չեն որ լաւագոյն առաջնորդներն են հաւաքականութեան եւ անոր կեանքին: Մեծ ու փոքր բոլոր զաղափարարանութիւններն ալ կ'իյնան աւազանէն ներս երեւակայութեան, անոր վրան հիմնուած վերլուծումին, եւ անոնցմէ յառաջացած վարկածներուն, ներկայէն վաղը տնօրինելու անհատական կամ հաւաքական շարժումներուն, անհատէն դէպի հաւաքական գործօնութեան դրսեւորումի սահմանազանցումներուն, որոնք արգասիքն են մտածումի որոշ հանգրիճումներու յաճախ տուեալ պայմաններուն մէջ գործնականութիւն մերժող ծրագրումներուն, եւ իտէպի ու նպատակի անկշիռ եւ անիրականանալի պարտադրանքներուն: Այսուհանդերձ՝ երեւակայութիւնն է որ ուղին կը բանայ վաղուան: Ազատութիւններու եւ իրաւունքներու հասնելու եւ անոնց տիրանալու մարդկային իղձն ու տենչն են որ դուռ կը բանան երեւակայութեան եւ տուն կը կանչեն ճիգն ու կամքը անոնց իրագործումին համար: Մեծ ու փոքր բոլոր յայտագիրները, քաղաքական եւ ընկերային, տընտեսական ու զինուորական բոլոր ծրագիրները, իմացական ու կրթական, հոգեկան եւ մտաւորական բոլոր յղացքները իրենց առաջին քայլով երեւակայուած եւ բառ ու բանի վերածուած միտքեր են եւ կ'ամփոփուին պարունակէն ներս բառերու սեղմ կաղապարին, կը դրուին թուղթի վրայ եւ ապա կը տրուին անհատ մարդուն կամ հաւաքականութեան՝ զիրով ու գրականութեամբ, դաստիարակութեամբ եւ ուսումնառութեամբ, մամուլով եւ հաղորդակցութեան բազմապիսի արտայայտչամիջոցներով, մարմնակրթանքով, եւ մերթ նաեւ զինական ուժով, արիւնով եւ յեղափոխութեամբ, որովհետեւ անոնց ետին կեցողները չեն որ պիտի հանդուրժեն այլ լախոհութեան եւ միտքի ու մտածումի զանազանութեան՝ եթէ որոշած են մտածումը վերածել իրականութեան, եւ վարկածը՝ իրողականութեան: Երբ այս մէկն իրագործողը անհատ մարդն է կամ փոքր մէկ հատուածը հաւաքականութեան՝ բունատիրութիւն է եղածը, իսկ երբ հաւաքականութիւնն է՝ ինքն է որ կը հասնի հոն՝ ռամկապետականութիւն, ազատականութիւն եւ ժողովրդավարութիւն¹⁴:

Պատմագիրն ու պատմաբանը դասողն ու դասաւորողն են այս իրա-

կանութիւնները Այսպէս ընելու համար, սակայն, «պատմաբանը [կամ պատմագիրը] պէտք է որ քննութենէ անցընէ վկայութիւնը [կամ վկայութիւնները] որ կը փորձէ թիկունք կանգնիլ «իրողութիւններուն», ընդհանրացումներուն եւ անցեալի վերարժեւորումներուն, ի՞նչ փոյթ որ զժուար է խուսափիլ ենթակայական կողմնակալութենէ: Տրամաբանօրէն կարելի է եւ գիտականօրէն կը պահանջուի զանազանել պատմաբանին արժեւորումները եւ զանոնք՝ որոնք կը պատկանին անցեալ շրջաններուն: Պատմաբանին անձնական արժեչափերը կ'առաջնորդեն զայն ընտրելու որոշ երեւոյթներ անցեալէն՝ ուսումնասիրելու համար զանոնք: Որեւէ նիւթի քննութեան պարագային անկարելի է խուսափիլ ընտրողականութենէ, սակայն ընտրողականութիւնն ու առարկայականութիւնը ներհակ չեն իրարու: «Իրականութիւնները» զգայութիւններ չեն պարզօրէն («միամիտ իրապաշտութեան» հակառակ), այլ եզրակացութիւններ փաստագրական ապացոյցի վրայ հիմնուած, եւ, ուրեմն, ենթակայ տրամաբանական հետազօտութեան: Պատմական այսպիսի ապացոյցներ կ'օգտագործեն վարկածներ, որոնք հիմնուած կը մնան ենթադրական նմանութիւններուն վրայ անցեալի տիպարներուն եւ ներկայիս ծանօթ՝ բայց ենթադրաբար անցեալ ղէպքերու առընչուող եւ ձեւով մը շարունակական եղող որոշ փաստերու: «Օրէնքներ» կամ մակածական ընդհանրացումներ պատմութեան մասին վտանգաւոր են՝ հակակշիռէ դուրս գտնուող մեծ թիւով տարբերակներու որեւէ ղէպքի միջամուկի ըլլալուն պատճառով: Այնուամենայնիւ՝ նոր իրողութիւններ ի յայտ բերելու համար օգտակար են Ֆիզիքական, կենսաբանական, հոգեբանական այլ տուեալներու մասին կատարուած ընդհանրացումները, եթէ այսպիսիները նկատի առնուին նախ որպէս վարկած եւ ապա որպէս մակածական սահմանափակ ընդհանրացումներ, որոնք կը պահանջեն փաստային ճշգրտումներ»¹⁵:

Այսինքն:

Այսինքն, ըստ Փիրսի՝ պատմաբանն ու պատմագիրն են որ վարկած մը, գաղափարախօսութիւն մը կամ գաղափարաբանութիւն մը որ ընծայուած է իրողականութեան, կամ այսօր ճամբուն վրան է այդպէս ըլլալուն, եւ անկէ յառաջացած հետեւանքները անհրաժեշտօրէն պէտք է որ զետեղեն ղէմ առ ղէմ, եւ ենթարկեն հակակշռումի, որպէսզի կարելի դառնայ գտնել իրագործուածը, ճշմարիտն այդ իրագործուածին մէջ, զրականը եւ ժխտականը, եւ տակաւին այն բոլորը, որոնք կը կարօտին ճշգրտումի, արտաքին եւ երեւութական դրսեւորումէն առաջ ներքին գնահատումի եւ արժեւորումի, գտումի եւ ջոկումի, դատումի եւ դասաւորումի, եւ անոնց անհատին կամ հաւաքականութեան բերած նպաստին արտահանումին:

Իսկ այս բոլորը կատարողներն են պատմաբանն ու պատմագիրը:

Ինչպէս որ կան կողմի պատմութիւններ՝ նոյնպէս նաեւ կողմի պատմաբաններ եւ պատմագիրներ, առաւել՝ կողմի պատմագրութիւն, իսկ կողմը մէկ մասն է ամբողջին եւ ամբողջական ճշմարտութեան, եւ առաւելագոյն պարագային՝ կէսն անոնց, եւ առ այդ՝ ի յառաջագունէ կ'ենթադրէ ոչ միայն կոտորակումը ամբողջին եւ ամբողջականութեան՝ այլ անոր հետ անոնց տէրն ու ժառանգորդն ըլլալու սահմանուած հաւաքականութեան, որ ժողովուրդն է եւ ազգը: Արդարեւ՝ ինչպէս որ չկան «կէս-հաւաքականութիւն», «կէս-ժողովուրդ», «կէս-ազգ» կամ «կէս-հայրենիք» ընկալումները՝ չկան նաեւ «կէս-պատմութիւն» եւ «կէս-պատմաբան» ստորոգումները: Կէս-պատմաբանը, եթէ կայ այդպիսի մէկը՝ կողմի մարդն է լոկ, եւ այդ իսկ պատճառով՝ պատմութիւնն ու պատմական ճշմարտութիւնները նենգափոխողը, խեղաթիւրողը եւ կեղծողը, որովհետեւ չկան նաեւ «կէս-ճշմարտութիւն»ներ: Այն բոլորը որոնք կը բաւարարուին բոլոր այս «կէս»երով՝ առաւելագոյն պարագային ճշմարտութեան փշրանքներէն հեքիաթն ստեղծողներ են եւ առ այդ՝ այդ փշրանքները պճնազարդողները սուտին եւ երեւակայութեան շքեղանքով:

Դիւանագիտութիւնը՝ արուեստն է սուտին, իսկ քաղաքականութիւնը՝ արուեստը կարելիին, այսուհանդերձ՝ միշտ պատմագիր մը չէ դիւանագէտը, ի՞նչ փոյթ որ յաճախ անոր գրաւոր վկայութիւնն է որ հիմ կը ծառայէ պատմութեան վերականգնումին: Անիկա կրնայ ըլլալ պատմաբան մը, ընկերաբան մը, բարոյագիր մը, արուեստագէտ մը կամ արուեստաբան մը կազմաւորումով, ուսումնասութեամբ եւ ասպարէզով, այսուհանդերձ՝ անգամ մը որ քայլ կ'առնէ սահմաններէն ներս դիւանագիտութեան՝ արդէն իսկ իր ետին կը ձգէ բազմաթիւ բաներ, որոնցմով էր որ անիկա ընծայուեր էր ընդհանրական խիղճը իր ժողովուրդին, եւ գրսեւորումը ու ժառանգորդն անոր երէկին: Հեղ մը որ կը զգենու պատմուճանը դիւանագէտին՝ ա'լ ուրիշ մէկն է անիկա, եւ յաճախ ձեռք կու տայ երեւակայութեան, յանձնապատանութեան, կեղծին ու սուտի արուեստին, որոնք հենքը եւ առէջը չեն կազմեր պատմագրութեան եւ անոր վերականգնած պատմութեան: Հոս կայ հոգեբանական շրջափոխում մը դիւանագէտէն ներս, որ պարզ գործակալ մը՝ այսինքն պետութեան գործօն պաշտօնեայ մը ըլլալու հանգամանքը մոռցած՝ ինքզինք կը նկատէ հիմնական դերակատար մը իր ժողովուրդին եւ պետականութեան պատմութեան եւ քա-

ղաքականութեան յօրինումին մէջ եւ կերտումին: Արդէն ա՛յս իսկ է այն մէկը՝ ինչ որ կը փորձէ հաստատել Ֆրանսացի ժաք տը Լոնէյը: Ըստ անոր՝ «ղիւանագէտներուն որոշ վայրկեանի մը բանալի դիրքի մը վրայ գըտնուելու իրողութիւնը կ'արտօնէ անոնց հաւատալ, թէ կը խաղան բախտորոշ գեր մը եւ իրենց ձեռքին ունին ճակատագիրն իրենց երկիրին: Միշտ չէ որ ճիշդ է այս մէկը: Դիւանագէտը յաճախ ժամանակաւոր գործակալ մըն է, թերի կերպով գիտակ, մերթ սխալ կերպով տեղեակ, հակառակորդին մօտ հակադրութիւն մը գրգռելու նպատակով: Յստակ է, որ անիկա կըրնայ մատչիլ շատ մը խորհրդապահական փաստաթուղթերու, սակայն անոնցմէ որոշներո՛ւ միայն: Ուստի, հակառակ իր ձեւացուցածին, իրեն կը պակսի ընդհանուր գաղափար մը: Արժէք պիտի չտանք դիւանագէտներու պատմութիւններուն, որոնք հիմնուած են լոկ ճանաչումին վրան քանի մը փաստաթուղթի, ի՞նչ փոյթ որ անոնցմէ ոմանք ճշգրտօրէն տեղեկագրեն այն մթնոլորտը որ կը շրջապատէր իրենց յարաբերութիւնները օտար պետութիւններու ղեկավարներուն հետ: ... Միով բանիւ՝ պատերազմի ականատեսներէն շատեր հակամէտ են հաւատալու, թէ հիմնական ղերակատարներ էին իրենք: Ուրեմն պատմաբանը պէտք է որ տայ իսկական արժէքը այսպիսի յաւակնոտ եզրակացութիւններու եւ տեղաւորէ անոնց ղերակատարները իրենց ճիշդ տեղը: Հո՛ս կը կայանայ մեծագոյններէն մէկը անոր աշխատանքին»¹⁷:

Ի՛նչ որ ալ ըլլայ իրականութիւնը դիւանագէտին եւ դիւանագիտութեան խաղացած դերին՝ պատմութիւնը ընդհանրական եւ ամենապարփակ դրսեւորումն է ընդհանրական եւ ամենապարփակ կեանքին, համընդհանուր ժառանգը հաւաքականութեան, ժողովուրդին եւ ազգին, եւ արտաշայտութիւնն անոնց գինուորական եւ քաղաքական, տնտեսական եւ մշակութային, կրօնական եւ բարոյական, ճրատարարութեան եւ միջպետական յարաբերութիւններու արտաշայտութեան: Զկան կէս—արտաշայտութիւններ, կէս—դրսեւորումներ եւ կէս—երեւոյթներ: Եթէ կան՝ կեղծ են անոնք, չինձու եւ պակասաւոր, աւելին՝ ժամանակաւոր, եւ հազիւ թէ բաւարար՝ տուեալ ժամանակի մը հատուածն ընդունելի ընծայելու համար: Առ այս՝ սուտին արուեստը եւ կեղծին արհեստավարժութիւնը կըրնան յաջողիլ պահ մը միայն, եւ անմիջական գոհացում պարգեւել լոկ զգացականին, մինչդեռ կեանքը սուտ չէ բնաւ եւ ոչ ալ՝ զգացական միմիայն: Անորը չէ լո՛կ բարիքը ներանձնականութեան եւ ներհայեցողութեան, եւ շնորհը՝ ինքնիրմէջ, ինքնիրմով եւ ինքնիրեն համար եղող ինքնարաւութեան եւ ամենարաւութեան, ի՞նչ փոյթ որ անիկա մերթ արտաշայտուի այդպէս՝ բանական, գերբնական եւ բնագանցական մտորումներով եւ խորասուզումներով, եւ պարզ անհատին համար որ կեանքն իսկ՝ ներկայանայ անընկալելի կերպով:

Կեանքն ամբողջութիւնն է այս բոլորին եւ յաճախ վեր կը կենայ տարազումէ եւ տեսութեան մը ընձեռնելիք իմացական յղացքներէն, ահա թէ ինչո՞ւ համար պարզ անհատը, ու մերթ՝ անհատներէ կազմուած հաւաքականութիւն մը, կ'անգիտանայ թէ կ'ապրի էութիւնը կեանքին եւ խորագոյն իմացքն անոր, մինչ իմաստասէրը գիտէ այդ մէկը եւ կը տազնապի զայն բացատրելի եւ ընկալելի ընծայելու իր ճիգին մէջ:

Դիւանագէտը, պատմարան ըլլայ անիկա թէ ուրիշ մէկը՝ այն մարդն է որ պիտի լուծէ կեանքին անմիջականը եւ ոչ թէ հեռաւոր ինչո՞ւն, եւ ինչ որ կը կատարէ եւ որպէս զիր ու վկայութիւն կը ձգէ իր հետնորդներուն՝ կը կազմէ մէկ մասը պատմութիւնը կերտող ատաղձին:

Այս ատաղձը գնահատելու համար այժմ կան մատչուածի երկու տեսութիւններ: Անոնցմէ «առաջինը», ինչպէս կը հաստատէ Ճոնաթան Սթաթը «չեչտը կը դնէ մարդկային առաջնորդներու խաղացած դերին վրայ պատմութեան հոլովոյթին մէջ, կը գովարանէ անոնց իրագործումները եւ անոնց հետեւանքները, եւ կը շեշտադրէ անոնց պատասխանատուութիւնը: Ըստ այս կարծիքին՝ քիչ թիւով տիտաններ են անոնք որոնք կը կերտեն կամ կը քանդեն մարդկային ճակատագիրը: Միւս վարկածը նուազագոյնի կ'իջեցնէ անհատը, ի՞նչ փոյթ թէ ո՞րքան մեծ է անիկա, [եւ] փոխանակ շեշտը դնելու անոր վրան՝ կը դնէ ընկերային, տնտեսական եւ քաղաքական պայմաններուն, դէպքերու անողոք կամ գրեթէ անողոք ընթացքին [եւ] հանրային կարծիքին անդրադարձներուն վրայ՝ որպէս որոշիչ գործօնները պատմութեան»¹⁸:

Այսուհանդերձ, ի՞նչ որ ալ ըլլայ իրականութիւնը, հո՛ւս է որ ի յայտ կու գայ դերը իսկական պատմարանին, որ ստիպուած է ընտրութիւն մը կատարելու ընդմէջ մէկուկու եւ միւսին:

10.

Սակայն ճի՛շդ հոս ալ անհրաժեշտը կ'ընծայուի մէկ վերբերումը «պատմութիւն» յղացքին, որ ի վաղուց անտի գրադ է պահած խոկ ու բանը որքան պատմութեան ուսանողին՝ նոյնքան եւ գուցէ նաեւ աւելի՛ իմաստասէրին, որոնք մէկէ աւելի անգամներ ճակատ են հակած անոր առջեւ ի խնդիր որոշ տարազումի:

Այսպէս, ըստ իտալացի Վիքոյի՝ Աստուած յառաջացնելով ճշմարտութիւնը՝ կը յառաջացնէ բնական օրէնքները՝ որոնցմով կարգ ու կանոն կը հաստատուին տիեզերքէն ներս, եւ բարոյական օրէնքները՝ որոնք կը ղեկավարեն մարդկային վարքն ու բարքը: Աստուած է որ մարդկային էակներէն ներս գետեղած է խղճմտանքը, որ արդարութեան ներքին զգացում

մըն է: Բոլոր մարդակերտ օրէնքները հիմնուած են խղճմտանքին վրայ եւ արդարութեան: Մարդն ի սկզբանէ եւ բնականօրէն ընկերային արարած մըն է: Ընկերութիւնը ոչ արուեստական է եւ ոչ ալ արդիւնքը խոհական որեւէ պայմանի: Եթէ մարդկային էակ մը հակընկերային է՝ մարդկային չէ արդէն: Քաղաքակրթութեան զարգացումը յարաճուն յստակացումն է խղճմտանքին եւ մարդուն ընկերային բնութեան, իսկ պատմութեան իրարայաջորդ հանգրուանները տարբերակներն են եւ ընդլայնումները միեւնոյն օրէնքին, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս որ կը գտնենք զանոնք ամէնէն նախնական պայմաններուն տակ իսկ:

Պատմութիւնը կը բաժնուի հիմնական երեք շրջանի՝ ըստ օրէնքի արտայայտութեան ձեւին ու բովանդակութեան: Նախնական զարաշրջաններուն օրէնքը կը ներկայանայ կրօնական իշխանութեան, սովորութիւններու եւ արտայայտամիջոցներու հանդերձանքով: Երկրորդ շրջանին անիկա կը ներկայանայ ի գործ դրուած իշխանութեան եւ կանոններու ձեւով, որոնք ձեւակերպուած են բացարձակ իշխանաւորներու կողմէ՝ ինչպիսին են արքաներն ու ազնուականները: Իսկ երրորդ եւ վերջին ժամանակաշրջանին, երբ անոնք կը կոչուին քաղաքակիրթ կամ մարդկային, օրէնքները կ'արտայայտուին իշխանութեամբ եւ օրէնսգիտութեամբ, եւ կը կենան վրան սկզբունքներու իմացական հասկացողութեան մը: Իրականութեան մէջ, այդ վերջինին՝ իմացական այդ հասկացողութեան վրան է որ կը կենայ օրէնքը բոլոր՝ ժամանակներու համար եւ որմէ կը ծագին պատմութեան բոլոր հանգրուաններն ալ: Հանգրուանային երեք այս շրջանները հասնելէ ետք իրենց լրումին՝ կը քայքայուին օրէնքն ու քաղաքակրթութիւնը ու պատմութիւնը կը վերադառնայ նախնական իր շրջանին, ու կը սկսի կրկնութիւնը պատմութեան հանգրուանային էութեան:

Ըստ Վիքոյի այս մեկնաբանութեան՝ ի յայտ կու գայ պատմութեան տեսութիւն մը: Եթէ իրաւ է այսպիսի իմաստասիրական բացատրութիւն մը՝ պատմաբանին համար պէտք է որ անիկա հաստատուած ըլլայ ճանաչողութեանը վրան մարդկային բնութեան, որովհետեւ պատմութիւնն ինքնին կը կերտուի մարդուն կողմէ, եւ բնական է նաեւ որ այս ճանաչողութիւնը հիմնաւորուի անցեալին ծանօթութեամբ եւ որուն անհրաժեշտ կերպով աւելնալու է երեւակայութեան կարողութիւն մը, որպէսզի պատմաբանը կարենայ ինքզինք փոխակերպել նախնական մարդուն եւ անոր աչքերով տեսնել այն շրջանը զոր կ'ուսումնասիրէ եւ ոչ թէ իր ժամանակէն եւ վայրէն, այսինքն քննելի հարցերն անհրաժեշտօրէն պէտք է որ տեսնէ ու քննէ նախնական մարդուն եւ անոր ժամանակին մէջ եւ ո՛չ թէ իր: Սակայն այս մէկը արդէն սեմին է ձախողութեան, յաճախ պատմաբանին անկարելիութեանը պատճառով: Եթէ յաջողի իր փոխադրումը ժամանակէն ներս, վայրէն եւ պայմաններէն՝ պատմութեան ուսանողը պիտի գտնէ,

որ, օրինակ, նախնական մարդուն հաւատալիքներն ու սովորութիւնները չեն հիմնուած տգիտութեան վրան եւ սնապաշտութեան, այլ, ընդհակառակը, անոնք տեսակ մը «բանաստեղծական իմաստութիւն» են եւ կ'ընդգրկեն միեւնո՛յն այն սկզբունքներն ու ճշմարտութիւնները՝ զորս աւելի հասուն ու զարգացած քաղաքակրթութիւնները կը ներկայացնեն աւելի խոհական՝ այլ խեղաթիւրեալ ձեւով¹⁹։

Գերման Ֆրիտրիխ Ֆոն Շեյլինկի համաձայն՝ պատմութիւնն այլ բան չէ եթէ ոչ տեւական յառաջդիմութիւն մը դէպի ամբողջական եւ կատարեալ ազատութիւն։ Անոր նպատակն է հաստատումը արարքներու այնպիսի դրութեան մը, որուն մէջ գերիվեր պիտի մնայ բարոյական օրէնքը եւ պիտի յաղթահարուի հակադրութիւնն ընդմէջ ազատութեան եւ կարիքին, եւ զիտակից կամեցողութեան եւ անզիտակից գրգռին։ Արդէն՝ պատմութիւնը աճող վերջառումն է Աստուծոյ, որ անձ մը չէ՝ այլ կատարելագործուած աշխարհ մը։ Իտէալի մը իրագործումը կը սպաննէ եսը, որովհետեւ ազատութեան իրագործումին համար վերացումը սահմաններուն եւ արգելքներուն՝ այլ բան չէ եթէ ոչ մահը։ Ազատութենէն պիտի պահանջուի աւելին եւ աւելին՝ այլ երբեք աւարտ մը եւ վերջաւորութիւն մը²⁰։

Ըստ Ֆրանսացի դրապաշտ Օկիւսթ Քոնիթի՝ կայ ոչ մէկ տարբերութիւն բարոյական եւ իմացական յառաջդիմութիւններու միջեւ եւ միտքի եղափոխական երեք հանգրուանները քաղաքականօրէն ունին համապատասխան երեք կարգեր։ Բնական երեւոյթները բացատրելու աստուածաբանական եւ անհատապաշտական եղանակները կը զուգորդուին զինուորական կազմակերպումին հետ։ Բնագանցական հանգրուանը կ'առնչուի ընկերութիւններու, որոնք շեշտը կը դնեն օրինական վերացական նկատումներու վրայ։ Դրապաշտական մատչում մը պատմութեան վերլուծումին՝ բնական կեցուածքն է եւ նեցուկը արդի ճարտարաբուստական դարաշրջանին²¹։

Անգլիացի Հըրպըրթ Սփենսըրը կը յայտնէ, թէ պատմութիւնը հոլովոյթ մըն է, որուն ընթացքին ընտանիքներ կը միաւորուին ու կը կազմեն ցեղախումբը, ցեղախումբեր կը հաստատեն համայնքը, եւ համայնքներն իրենց կարգին մեծ ու մեծագոյն քաղաքական միաւորները. այս հոլովոյթին կ'ընկերանան յառաջընթաց գանազանութիւն մը եւ յումպէտս վատնում մը մարդկային գործունէութեան։ Լրիւ ամբողջականութեան եւ գանազանութեան կարելի է հասնիլ միմիայն ամբողջական կերպով կայուն եւ կանոնաւոր ընկերային կազմակերպութեան մը մէջ, ուր բոլո՛ր քաղաքացիներն ալ ունին ազատութիւնն արտայայտութեան եւ իրենց կեանքն ապրելու՝ առանց միջամուխ ըլլալու ուրիշներու անձնական արտայայտութեան եւ անհատականութեան։ Ուստի՝ ամէն մարդ իրաւունքն ունի ինքնապահպանումի, ազատութեան եւ երջանկութեան։ Սակայն տրուած ըլ-

լալով որ անհատին բարորութիւնը կ'առնչուի հաւաքականութեան բարորութեան եւ համայնք մը չի կրնար վնասուիլ առանց անհատի վնասուելուն՝ անհատական իրաւունքներն արդարօրէն կրճատուած են ապահովել կարենալու համար ապահովութիւնը սպառնալիքի ենթարկուած հաւաքականութեան: Իրականութեան մէջ՝ հաւաքականութեան ապահովութիւնը կարելի է պահել միմիայն կրճատումովը անհատներուն ազատութեան: Այսուհանդերձ՝ երբ կը չքանայ սպառնալիքը՝ ինքնաբերաբար կը վերահաստատուին անհատական իրաւունքները²²:

Սակայն իտալացի Պենետեթթօ Քրոչչի համար պատմութիւնը բացարձակն է, որ իր մէջ կը միացնէ գործունէութիւնն ու ճանաչողականութիւնը: Բացարձակն է որ գործի կը մղէ աշխարհի հոլովոյթը եւ նոյն ատեն ժամանակին անդրադարձը կու տայ անոր: Այսպէս է նաեւ մարդկային պատմութեան մէջ, ուր զուգընթաց եւ միախառն կը քալեն ղէպքերն ու անոնց ճանաչողական արժեւորումը: Պատահարներն ինքնին մարդկային արարքներ են, զորս կատարողները կը ղեկավարուին ճանաչողականութեամբ: Եթէ կարելի ընծայուի գիտնալ թէ ի՞նչ էր պատահեր իրապէս՝ պիտի կարելի ըլլար մուտք գործել անցեալէն ներս եւ զայն տեսնել աչքերովն անոնց որոնց համար անիկա ներկան էր միայն, նոյն ատեն կարելի պիտի ըլլար արժեւորել այդ երէկը լոյսովը գալիքին, որուն պիտի առաջնորդէր անիկա եւ որուն մէջ կ'ապրի մարդն այսօր: Երէկին մատչելու բոլոր այս գործողութեան ընթացքին պատմաբանը կը կատարէ երկու գործողութիւն եւ իրարմէ անբաժան երկու արարք— անիկա թէ՛ կը վերստեղծէ պատմութեան տուեալ մէկ պահը վայրկեան առ վայրկեան, եւ թէ՛ ալ ակնարկով մը կը գրկէ ամբողջութիւնը ոչ միայն վայրկեաններուն՝ այլ մանաւանդ իրարայաջորդ պահերուն, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ կ'ընէ բացարձակը: Անիկա՝ պատմաբանը, ի՛ր իսկ արդար իրաւունքով խորագոյն իմաստասէրն է: Պատմութիւնը պէտք չունի պատմութեան իմաստասիրութեան՝ պարզօրէն անոր համար որ պատմութիւնն ինքն իսկ է իմաստասիրութիւնը իրաւին եւ բնութեան²³: Ճիշդ հօս ալ պատմութեան տարազումի ճիգին կը մատչի իտալացի ձիովաննի ձենթիլէն՝ յիշեցնելու համար եւ ամփոփելու այս բոլորը, թէ պատմութիւնը բացարձակին յայտնագործումն է ինքզինքին իսկ, եւ առ այդ՝ յայտնութիւնը ճշմարիտին, այսինքն՝ պատմութիւնը իմաստասիրութիւնն իսկ է²⁴:

11.

Իմացարանական մատչում մը պատմութեան տարազումին սակայն՝ պատմաբանն ու պատմագէտը կ'ընծայէ իմաստասէր: Իրականութեան

մէջ՝ իրենց պարզագոյն խորքին մէջ պատմաբանն ու պատմագէտը կը կենան նոյն հորիզոնականին վրայ, եւ կը նոյնանան յաճախ²⁶, սակայն երբեք չեն դառնար պատմագրագէտ, որ շատ աւելի մօտիկը կը կենայ պատմագիրին: Առաջինները գիտեն բովանդակութիւնն ու թուումն մասանցը պատահածին եւ եղածին, մինչ միւսները՝ միջոցն ու եղանակը զանոնք ներկայացնելուն, այսինքն՝ առաջինները մասնագէտն են «ինչ»ին, իսկ միւսները՝ «ինչո՞ւ»ին եւ «ինչպէ՞ս»ին: Պատմութեամբ զբաղող մարդերէն յառաջացած դասակարգումին մէջ առաջինին պատկանողները մեքենան են լոկ, որ կ'արձանագրէ եւ կը վերարտադրէ միայն, իսկ երկրորդին պատկանողները տէրն են զանոնք արձանագրելու եղանակին, ահա թէ ինչո՞ւ համար առաջին դասէն եկողները մերթ կը մօտենան ժամանակագիր մը ըլլալու իրաւութեան, մինչ միւսէն եկողները՝ ժամանակէն ներս պատահածներուն ներքին խորհուրդը բացայայտող մը ըլլալուն: Առաջին պարագային՝ կատարուած աշխատանքը մեքենական վերարտադրութիւնն է ընկալուածին, եւ անոր կը պակսի անոր վերապրումին հետ վերացայտումն անոր ներքին բոլոր այն զսպանակներուն, որոնք ծնունդ կու տան եւ առաջմղում՝ եղածին ու պատահածին գոյառումին. այլ խօսքով՝ անիկա պարզ մէկ տարանջատումն է անհատ դէպքին եւ պայծառ կամ տօգոյն մէկ պատկերումն անոր. մինչդեռ երկրորդ պարագային՝ ընկալուածն անցընելէ հետք գիտականութեան եւ վերլուծումի մաղէն ու բովէն՝ զայն արտայայտելն է ընդհանուրին տանելի ընկալութեամբ մը՝ ի ինդիր ճշմարտի որոնումին եւ արտահանումին: Պատմաբանն ու պատմագէտը գրեթէ միշտ ալ կը յենին վրան ուրիշներէն իրենց եւ իրենց ժամանակակիցներուն փոխանցուածներուն եւ անոնց կողմէ իսկ կազմուած եւ բառ ու բանի շնորհն զգեցած եզրակացութիւններուն, մինչդեռ պատմագիրն ինքն է որ հաւաքականութեան մը կեանքին, ժամանակին եւ վայրին տուեալներն ի ձեռին՝ անոնցմէ կ'արտահանէ ինչո՞ւն եւ ինչպէ՞սը եղածին ու պատահածին, կը հասնի եզրակացութիւններու, եւ առ այդ՝ կ'ընծայուի արարիչը ճշմարտութեան եւ կերտիչը խորհուրդին: Իրմէ՛ է որ կախում ունին պատմաբանն ու պատմագէտը, որոնք գրեթէ միշտ ալ կը կրկնեն ու կ'երեքնեն այն՝ ինչ որ կը հաստատէ եւ կը յայտարարէ ինք: Պատմագիրը դատողն է, մինչ պատմաբանը եւ պատմագէտը՝ վկան այդ դատումին:

Այսուհանդերձ, ըստ Շլեգինկէրի՝ պատմաբանինն²⁶ է կիրքը հարցերը, տուեալները եւ դէպքերը տիպարայնացնելու: Անիկա «իր աշխատասենեակին մէջ դէպքերը վերակազմելով՝ կը սիրէ հարցերը կարգի դնել, զբոսնել անոնց առընչութիւնները եւ միասնականութիւնները: Երբ անիկա, պատմաբանը, մասնակցած է մեծ դէպքերու՝ սորված է թէ հարցերը հազուադէպօրէն տեղի կ'ունենան կանոնաւոր, որոշ ձեւով եւ տրամաբանական կերպով մը: ...Ականատես պատմաբանը կը միտի պահպանել զգացա-

կան խորքը ղէպքերուն եւ ճանչնալ ղերն այնպիսի տարրերու՝ ինչպիսին են խառնաշփոթութիւնը, անգիտութիւնը, բախտը եւ պարզ յիմարութիւնը: Արհեստավարժ պատմաբանը, որ կու գայ աւելի ուշ, յաճախ ոճն ու ծրագիրը կ'ընծայէ գործընթաց մը, որ իր բնութեամբն իսկ գործօնական է եւ ոչ թէ մեքենական: Պատմաբանները կը մերժեն կեղծ մեկնաբանութիւնը պատմութեան, սակայն մերթ ազնիւ կերպով իրենք իսկ կը դառնան անգիտակցօրէն զայն առաջարկողները՝ անոր վերագրելով նպատակ մը որ կը պատկանի պատահականութեան»²⁷:

Այսուհանդերձ, ինչպէս Արթուր Շլեզինկէրէն քսանամեակ մը ետք կը ղնէ Սուրէն Զոլեանը՝ «պէտք չէ մտահան ընել որ պատմական ղէպքերու մասնակիցները, նոյնիսկ եթէ կացութիւնը բախում չ'ենթադրեր, իրականութիւններու մասին չունին սպառիչ եւ վստահելի ծանօթութիւն, այլ աւելի՛ անոնք [ղէպքերը կու տան] աւելի կամ պակաս կերպով ընդունելի վարկածներէ սկսելով: Ահա թէ ինչո՞ւ համար թէ՛ անոնց օգտագործած ինքնաբացայայտիչ լեզուն եւ թէ՛ ալ լեզուամիջոցը որ կը բացատրէ անոնց վերաբերումը [ղէպքերու հանդէպ]՝ չեն կրնար իրականութիւնը ներկայացնել վստահելի եւ յստակ ձեւով մը»²⁸:

Այս բոլորը, սակայն, կը նշանակեն մէկ բան — բացակայութիւնը առարկայականութեան, որուն հետ անհրաժեշտ կերպով զուգորդուած կը մնայ ենթակայականութիւնը: Իրականութեան մէջ՝ ամէնէն առարկայական ենթադրուած անհատէն ներս իսկ որ պատմաբանն է՝ անհերքելի ներկայութիւն մըն է՝ ենթակայականութիւնը, եւ այդ իսկ պատճառով՝ լո՛կ փաստերու եւ տուեալներու լեզուով խօսող պատմագէտն իսկ յաճախ կ'իյնայ ոլորտներէն ներս ենթակայականութեան: Արդարեւ, Միրումեանին ալ հաստատումով՝ «կարող է թուալ, թէ պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անվերջ թուով փաստերի, վկայութիւնների, գաղափարների ու տեսութիւնների մի հսկայական շտեմարան, որտեղից իւրաքանչիւրն իր հայեցողութեամբ ընտրում է այն՝ ինչ հարկաւոր է, գործածում է այնպէս՝ ինչպէս կամենում է: Այդ ղէպքում արդեօ՞ք պատմութիւնը չի վերածւում տարբեր, երբեմն հակադիր գիտական, մշակութային եւ քաղաքական խնդիրների լուծմանը ծառայող միջոցի, հասարակ նեցուկի, ցուցանիւթի: Եւ չի՞ կորցնում արդեօք պատմութիւնն ըստ այդմ օրիէկտիւութեան յատկանիշը՝ ներհիւսուելով սուբիէկտիւի կամայական մտակառոյցներին, կատարելով ընդամէնը օժանդակ դեր: Եւ, վերջապէս, չի՞ վկայում արդեօք այդ ամէնը գիտական առումով պատմական իմացութեան անհիմն լինելը, պատմական գիտելիքի եւ արդիականութեան հետ դրա յարաբերակցութեան չափանիշերի բացակայութեանը: Սրանք այն հարցերն են, որոնք մշտապէս յարուցում եւ յուզում են գիտական միտքը յատկապէս վերջինիս «անկայուն» պայմաններին:

«Վերոյիշեալ դիտարկումներն ու նկատումները, սակայն, բնաւ էլ չեն վկայում պատմական գործընթացի, պատմական իմացութեան եւ գիտելիքի օրիէկտիւութեան եւ գիտականութեան բացակայութիւնը: Այստեղ պատմութիւնը (եւ իբրեւ իրական գործընթաց, եւ իբրեւ այդ գործընթացի իմացութիւն) որեւէ մեղք չունի: Դա պատմութեան բազմազանութեան, բազմաշերտութեան, բազմիմաստութեան բնական եւ տրամաբանական հետեւանքն է, ուստի եւ ոչ մի հայեցակարգ, ոչ մի տեսութիւն ի վիճակի չէ ամբողջութեամբ ընդգրկել եւ արտացոլել այն: Միւս կողմից, իւրաքանչիւր հայեցակարգային—տեսական մտակառոյց վերադրուելով պատմութեան վրայ՝ միշտ էլ կարող է անթիւ պատմական փաստերից, գաղափարներից եւ ուսմունքներից գտնել այնպիսիները որոնք պատմամշակութային համատեքստից եւ պատմական շարժման տրամաբանութիւնից անջատուած լինելով՝ կարծես թէ ապացուցում են դրա ճշմարտութիւնը: Այդ իսկ պատճառով՝ գործնականում պատմութիւնն ի զօրու է «բացատրել» բոլոր հնարաւոր գիտական եւ սոցիալ—քաղաքական պահանջները, առաջարկուած խնդիրները, փաստագրական հիմք տրամադրել զանազան ծրագրերի, հայեցակարգերի, [եւ] գաղափարների»²⁰:

Այսինքն: Այսինքն այն թէ՛ նո՛յնիսկ ամէնէն ենթակայականը փաստերուն, որ վկայութիւնն է ականատեսին եւ պատմութեան մասնակիցին՝ կու գայ խաղալու հիմնական դեր մը պատմութեան վերականգնումին եւ վերակերտումին մէջ, եւ անոր հետ՝ յուշն ու յուշագրութիւնը նաեւ:

12.

Այսուհանդերձ՝ պատմութիւնը հաւաքական յիշողութիւնն է ժողովուրդի մը, անոր անցեալն է եւ ներկան, եւ անոնցմէ ստացուած ժառանգութիւնը նաեւ:

Չկա՛յ անժառանգ հաւաքականութիւն՝ ինչպէս որ չկայ յիշողութենէ զուրկ ժողովուրդ, կայ սակայն ժամանակի ընթացքին իր ժառանգին հետ իր յիշողութիւնը կորսնցուցած հաւաքականութիւն: Այսպիսի հաւաքականութիւն մը ա՛լ պատմութիւն է ինքն իսկ, իսկ պատմութիւնը չի կրնար ունենայ պատմութիւն: Անանցեալ անցեալն է անոր ժառանգը, իսկ այդպիսի անցեալ մը անհեթեթին սահմաններուն կառչած ընկալում մըն է արդէն: Անընկալելի ընծայուած անհեթեթութեան հետեւանքն են այն շփոթն ու խառնակութիւնը, որոնք մերթ կը ստորոգեն հաւաքական յիշողութիւնը տուեալ ժողովուրդի մը, որ ազգային գիտակցութիւնն է անոր. միւս կողմէ՝ անհեթեթին եւ տարազումի չեկող որեւէ կացութեան մատչում մը որ պիտի դրսեւորէ հաւաքականութեան մը հոգեկան, յուզական եւ իմա-

ցական շփոթն ու խառնակութիւնը՝ պիտի դառնայ հետեւանքն այն ճիգին որ կը փորձէ անկաշունէն յառաջացնել կաշունը, յուշակորոյսի մեկնողէն՝ յուշը եւ յիշատակը, անշքացումի դատապարտուածէն եւ հացումէ զրկուելու ենթարկուածէն՝ հացումն ու գոյացութիւնն անոնց՝ յաճախ առա՛նց ալ գիտնալու ինչպէ՞սն այդ արարքին: Իրականութեան մէջ՝ պատմագիրն է որ արձանագրութեան անցած կամ քարի ու մետաղի երեւոյթ զգեցած այդ յիշողութիւնը պիտի բերէ բարիքին ու դատումին պատճառականութեան մը կրթանքին, սեղանի հասցնէ հետեւանքն ու արդիւնքը պատճառներուն, որոնք մղում, կեանք ու ներուժ պարզեցնին եղածին եւ գոյութեան կոչուածին, եւ ստեղծեցին որոշ յաջորդականութիւն մը, ու տուին ընթացքն ա՛յդ ժամանակին, որուն անբաժան մէկ մասնիկն է եւ որուն կը մնայ դրսեւորումը այժմու ժառանգուած յիշողութեան, այսինքն՝ ազգային ապրումին եւ գիտակցութեան:

Գիտակցականին հասած յիշողութիւնը անկապտելի ժառանգն է ժողովուրդի մը, որ սերունդէ սերունդ փոխանցուելով՝ ժամանակի այլազան աւազանումներուն մէջ եւ որոշ վայրերու եւ սահմաններու՝ կը կերտէ ազգը անդիմազիժ հաւաքականութենէն՝ օժանդակութեամբն ու գործօն նպաստովը ներքին այն մղումին զոր մերթ կը ստորոգենք հրայրք, եռանդ, մշակոյթ, հաւաքական ուժ, ժողովրդային եռեւեփում, եւ նոյնաման այլ անուններով: Այսուհանդերձ՝ պատմութեան ընթացքը կազմող զանազան փուլերու յաջորդականութեան մէջ այդ քան ալ հեղասահ չի ներկայանար սերունդէ սերունդ անցքը ժողովուրդի մը յիշողութեան ժառանգին: Անարգել փոխանցումի անակնկալ կասեցումին իրենց նպաստը բերելու կու գան ոչ միայն բազմաթիւ արտաքին միջամտութիւններ՝ այլ նոյնիսկ զայն ժառանգելու կանչուած մարդերն ու անոնցմով գոյութեան կոչուած հաւաքականութիւնները իրենք: Այսպէս՝ իր խօսքը մասնաւորելով սերունդէ սերունդ փոխանցելի մշակոյթին, որ անկասկած անհերքելի տարրերէն մէկն է ժողովուրդի մը հաւաքական եւ ազգային յիշողութեան՝ Ալլաւիերտեան կը հաստատէ, թէ «ազգ մը իր մշակոյթով»⁶⁰ կը յաւերժանայ, իսկ մշակոյթը՝ միմիայն իր վաւերական արուեստագէտներով կը զարգանայ [եւ] կը ճոխանայ: Երբ ժողովուրդ մը կը կորսնցնէ իր մեծ արուեստագէտները յարգելու, պատուելու, [եւ] անոնց բարօրութեան նիւթապէս նպաստելու երկիւղած զգացումը՝ հետզհետէ լեզուն, մշակոյթը, կրօնքը, եւ ամէնէն սարսափելին՝ զանոնք յաւերժացնող նուիրումի կիրքն է որ կը շողիանայ:

«Ի զուր տեղը չէ որ մարդկային պատմութիւնը իր մասնալատուկ ձեւը կը հնարէ միշտ ալ՝ արուեստագէտը անմահացնելու: Անդին որքան հեշտօրէն մոռացումին զամբիւղը կը նետէ անթիւ եւ անհամար մեծահարուստներ, գործարարներ, [եւ] բարձրաստիճան գինուորականներ»⁶¹:

Մշակութային գործօններէն տարանջոււմ մը այս նշումներուն դէպի տարրերը հաւաքականութեան՝ յստակ կ'ընծայէ այն զոր «ազգ» կ'որակէ հայերէն լեզուն: Ազգը, սակայն, իւրացուած յիշողութիւնն է ժողովուրդի մը անկազմակերպ երէկին, իսկ ազգային յիշողութիւնը՝ անհատականէն վեր հաւաքականութեան մը անտես եւ յաճախ զգայնութենէ եւ ընկալութենէ վրիպած խլրտումը, իմացական էութիւնը, ոգեկան տարածականութիւնը, եւ պատմական ու հաւաքական, էութենական եւ հոգեկան գիտակցութիւնը, որ առաջին հերթին կը յենի գիտակցումին վրան ցեղային, արեւակցական, ընկերային, կրօնական, լեզուական եւ տարածական պատկանելիութեան: Սերունդներու յաջորդականութեամբ որպէս պորտալար փոխանցուած այս գիտակցումն է, որ ողն ու ծուծը կը հանդիսանայ անցեալ կերտած եւ զայն վաղուան հրիտակած հաւաքականութեան մը եւ անոր երէկին ու պատմութեան: Այն բոլոր հաւաքականութիւնները որոնք զուրկ են փոխանցումի այս գիտակցութենէն, եւ անատակ՝ իրենք գիրենք վերանորոգելու՝ վախճանական են անպայման եւ ենթակայ՝ անվերադարձ չքացումի: Ապրիլ՝ յիշողութիւնն է եւ գիտակցութիւնը երէկին, այսօրին եւ վաղուան, իսկ անոնք՝ այդ յիշողութիւնն ու գիտակցութիւնը կեանքն իսկ են գերազանցօրէն ապրումէ անցած: Արդէն Անթիլիասի գահակայն ալ՝ այս է որ կը հաստատէ, երբ կը գրէ թէ «ազգի գոյութեան, յարատեւութեան եւ ինքնուրոյնութեան արմատը նորա անցեալն է, հոգեւոր կեանքը, ստեղծագործութիւնը, կրօնը եւ լեզուն, պատմութիւնը ընդարձակ մտքով, ընդելուզուած ներկայի եւ կոփուելիք ապագայի հետ՝ պատմութիւնը գիտակցուած կեանքն է անցեալի պեղումներով՝ դարերի խորքից երեւան հանուած գանձերով զարդարուած»³²:

13.

Վախճանաւորում մը չեն ենթադրեր հաւաքական յիշողութիւնն ու ազգային գիտակցութիւնը ժողովուրդի մը: Երբոր անոնք կը մնան գիտակցականին ըմբերելիք բարիքէն եւ մանաւանդ տարածողականութեան եւ ժամանակի ինքնորոշ պայմաններէն հեռու՝ այսուհանդերձ կենդանի՝ հաւաքականութեան զէթ համեստագոյն խաւէն ներս, (որովհետեւ ան է պահողն ու պահպանողը բնագոյնին այդ յիշողութեան եւ պատկանելիութեան գիտակցութեան) անոնք կ'ընծայուն աւանդութիւն, իսկ երբ կ'անցնին շնորհին գիրին ու գրականութեան՝ կը դառնան հաւաքական պատմութիւն արդէն, զոր սովոր ենք կոչելու կա՛մ աւանդապատում, կամ ալ, առաւելագոյն պարագային, աւանդական պատմութիւն: Հո՛ս է որ պատմագիրը կու գայ պատմութեան վերածելու զայն գիտնականի իր չափ ու

կշիռով:

«Պատմութիւնը գիտութիւն մըն է» կը հաստատէ Ֆրանսացի Ամպելէնը, եւ «այս ստորոգումին արժանի ըլլալու համար անհրաժեշտ է, որ անիկա ըլլայ ճշգրիտ, կանգնի փաստաթուղթերու վրայ եւ անոնց բաղդատութեան, ժամանակագրական խոր քննութեան մը եւ ճշգիւ փաստարկութեան: Յաճախ առասպելներն այլ բան չեն եթէ ոչ ձեւագեղծումը անոր՝ սքանչելիին հանդէպ տածուած սէրով մը ընդլայնուած, եւ մերթնիւթական զօրաւոր պահանջի մը գոհացում տալու նպատակով:

«Արդարեւ՝ պատմութիւնը չափահասներուն համար է, իսկ առասպելները անոնց՝ որոնք տակաւին չեն եղած այդպէս, կամ ալ չափահաս են ոչ-լրիւ կերպով»³³:

Աւանդական պատմութիւնն ընդհանրութիւն է միայն եւ արձագանգը հեռաւոր հերոսապաշտութեան մը, յաջորդականութեամբը սերունդէ սերունդ եւ ճիւղէ ճիւղ փոխանցուող հերոսներու եւ դիւցազուններու, եւ ստորոգումովը գերբնականին, դրականին, գեղեցիկին, հզօրին եւ անպարտեղիին, այսուհանդերձ՝ յաճախ խառնակ, կեդրոնաձիգ եւ հակամէտ՝ բազմաթիւն ընծայելու մէկ, բազմաթիւներէն ստեղծելու միաւորը, որ, վերլուծումի վերջին հանգրուանին, հերոսն է միշտ, եւ ժամանակի ընթացքին անհատականացած ժողովուրդ մը՝ մարդկայինի եւ անհատականի դրսեւորումով, միշտ ալ, սակայն, իրմէ ներս ամփոփած նկարագրային գիծերն ու առասպելական հենքը իրեն ծնունդ տուող եւ կերպարանք պարգեւող հաւաքականութեան, որ գրեթէ միշտ իրմէ ներս տեղ մը անթեղուած կը պահէ զգայնութիւնը զինք գոյութեան կոչած հող հայրենիին, ջուր ու կապոյտին, եւ դար եւ դալարիքին, ու մանաւանդ՝ այդ բոլորին պահպանումին համար հեղուած արիւնին: Հերոսը առասպելացած, անհատականացած եւ ինքնուրոյն եւ մը ընծայուած հաւաքական զգացողութիւնն է ժողովուրդին, անոր ապրող ու տեսող յիշողութեան, անոր ոգեկանութեան եւ նկարագրի ոգեղինացումին:

Հերոսը մարդ-աստուածն է վարէն դէպի վեր, հողէն դէպի երկինք, մութէն ու ստուերէն դէպի լոյս ու արեւ բարձրացած: Այդպէ՛ս է, որ, վարէն, շօշափելիէն, թանձր ու բիրտէն դէպի վեր, դէպի վերացականացում, դէպի լուսեղինացում օլացք մըն են հաւաքական պատմութիւնը եւ անհատականացումը սուեայ հաւաքականութեան մը, այսինքն՝ լուսեղինացումն անոնց եւ գանոնք գոյութեան կոչած անհատ մարդերուն, մինչ, հակառակը, լոյսէն դէպի մութը, ոգեղինացումէն դէպի տարրացումը մարդկային հաւաքականութեան՝ քանդումն ու քայքայումն են անոր աստուածայնութեան, հերոսայնութեան եւ գերբնականութեան, եւ ուրեմն՝ առաջին քայլն իսկ են անոր չբացումին եւ անէացումին:

Սակայն միշտ չէ որ վերսլացք մըն է հերոսինը, այսինքն՝ ընթացքն

անոր մարդեղինութենէն զէպի աստուածացումը: Կայ նաեւ կարելիութիւնը հակառակ ուղղութեան մը գործօնութեան եւ այդպիսի վերալացք մը արձանագրելէ ետք՝ ետդարձ մը վերէն վար, այսինքն՝ աստուածայնութենէն վերագարձ մը զէպի մարդեղինութիւն³⁴: Այս մէկն արդէն քանդումն իսկ է հերոսակերտումի եւ հերոսաստեղծութեան գործընթացին, եւ կ'ենթադրէ անհակակշիռ զգացողութիւն, զգայնութեան անհաշիւ մտնում, ներուժի անփոյթ վատնում, եւ ցնորքի մատչող երեւակայութեան մը պոռթկումի աշխուժացում, եւ որ, ի վերջոյ, կը յանդի իտէլականացումէն անդին անցնող ցնորապաշտութեան: Այս ուղղութեամբ, առանց իսկ ընկերարան մը ըլլալու, կ'եզրակացնէ Այլահերտեանն իրաւացի կերպով, թէ «քսաներորդ դարու սա վերջին քառորդին, մինչեւ իսկ կոյրերը կրցան տեսնել, թէ ինչպիսի դաժան ճակատագիր մը կը սպասէ այն ազգերուն, որոնք հաւաքական խելագարութեամբ մը կ'աստուածացնեն իրենց զեկավարհերոսները եւ կը համակերպին, մեղսակից լռութեամբ մը, անոնց տմարդի քմայքներուն:

«Անհատներն ալ, ժողովուրդներուն նման, զէպի բարոյական քայքայում կ'երթան, եթէ հանդուրժողութեան զգայարանքը խորունկ ու շուալլ արմատներ չնետէ իրենց ընդերքներէն ներս:

«...Պաշտամունքի առարկայ եղող հերոսին կախարդանքը կու գայ ոչ միայն իր սխրագործութիւններուն զմայլելի խիզախութենէն՝ իբրեւ մարդ: Այդ կախարդանքը կը բխի նաեւ երագներ մարմնաւորելու իր մոգական կարողութենէն՝ իբրեւ գերմարդ: Հերոսը, հակառակ տիրող ժողովրդական կարծիքին, միայն գերմարդ չէ: Առասպելացած գերմարդը խորհրդաւոր մէկ համադրութիւնն է մարդուն եւ գերմարդուն:

«Եթէ գերմարդը անգերագանցելի է՝ մարդը կը մնայ եւ պիտի մնայ վիճելի»³⁵:

14.

Դարերն են որ պիտի աստուածացումի առաջնորդեն հերոսը, եւ գերբնականին՝ մարդկային երեւակայութիւնն ու տեսլապաշտութիւնը: Անոր անհատականացումն իրեն պիտի տայ բարիքն ու շնորհը մարդկայնօրէն անկարելի բաներու: Սակայն ըստ կարգ մը հեղինակութիւններու՝ «հերոս մը մեծ է ոչ միայն անով թէ ի՞նչ կը կատարէ ինք, այլ անով՝ թէ ի՞նչ է ինք», այսինքն՝ անիկա ոչ միայն «զէպէն յառաջացուած մարդն» է՝ այլ մանաւանդ «զէպէ յառաջացնող մարդը»³⁶: Ոչ միայն այսքան սակայն: Ըստ Պենթիլիի՝ «հերոսը իրողութիւն մըն է, եւ մարդ մը՝ որուն միմիայն զէպքեր չեն պատահիր, այլ ինքն է որ կը ստիպէ որ անոնք, կամ անոնցմէ

ումանք, պատահին: Երջապատը կրնայ ընդունիլ կամ մերժել զայն, եւ ռամկապետական ժողովուրդ մը, որ կրնայ ըլլալ շրջապատին շատ որոշիչ մէկ հատուածը, կրնայ ընդունիլ կամ մերժել զայն»³⁷:

Ինչ որ ալ ըլլան այս բոլորը, սակայն, եւ ինչպէս որ ալ ներկայանայ Հերոսը՝ մարդէն հերոս անցումին մէջ է որ կը գտնուի խորհուրդը մարդ—աստուած յարաբերականութեան, որ կը մնայ անլուծելի, իսկ շատ աւելի այդպէս են լուծելն ու վերլուծելը մարդ—հերոս—աստուած շրջափոխութիւնը պատմութեան արշալոյսէն անդին եւ վերհանումն անոնց իւրաքանչիւրէն ներս առկայ անհատականին եւ ինքնուրոյնութեան, որոնք, իրականութեան մէջ, կրկնումն են այդ եզրերէն որեւէ մէկուն՝ լո՛կ ընկալումովը այլ դրսեւորումի մը, պարզ այն անհերքելի պատճառով որ ի սկզբանէ մարդէն ներս կը գտնուին հերոսն ու աստուածը, ինչպէս որ հերոսէն ներս կը գործեն մարդն ու աստուածը, եւ աստուածէ ներս կը մարմնաւորուին մարդն ու հերոսը. այս բոլորը այլափոխումն ու ինքնակրկնումն են միեւնոյն գաղափարին, եւ մարմնաւորուած՝ միեւնոյն էոյթէն, նիւթէն ու տարրէն աննիւթին եւ նիւթի ու տարրերու վերացականացումին եւ գաղափարայնացումին հայող շրջափոխումով եւ փոխակերպումով, որոնք անհատը կը մօտեցնեն հերոսականին եւ աստուածայինին, եւ անոնց երեքին ընդխառնումով գոյութեան կը կոչեն հաւաքական անհատականութիւնը անհատներէ կազմուող հաւաքականութեան, այսինքն՝ ժողովուրդի մը գոր հայերէնի բառ—խմացութիւնը կը ստորոգէ «հերոս»՝ առանց որ փորձէ անկէ ներս գտնել առկայութիւնը անհատ մարդուն, որուն անունով է որ կը կանգնի ժամանակներուն դէմ եւ կ'ընծայուի ընկալելի, իսկ երբ անիկա մնայ անմատչելի եւ անընկալելի, այսինքն՝ երբ մարդ անհատը մնայ մեկուսի եւ չկարենայ գտնել նոյնութեան որեւէ եզր իր եւ միւսին՝ միջեւ, եւ անհամատեղելիութիւնն ու անհամակացութիւնը գան սահմանագիծ մը դնելու իր եւ միւսին՝ այսինքն աստուածոյ միջեւ՝ որուն ազդեցութիւնը կը մնայ մարդը եւ իրեն հետ անոր կը տանի իր ստեղծած հերոսը նաեւ՝ նոյնհետայն անիկա կը մատչի հերոսացումէն վեր աստուածայնութեան:

Մարդ անհատին այս աստուածայնացումն է, որ դուռը կը բանայ յաւերժին, ու մարդ—աստուածը կը տանի անկէ ներս, ուր անիկա կ'ընծայուի ուժը, անկորնչական եւ ինքնաստեղծ ուժը, այսինքն սկզբնական ուժը, որ ոչ միայն կը կերտէ ինքզինք՝ այլ ինքզինքով նաեւ իրմէ դուրս գրանուող քիչ մը ամէն ինչ, որ շուտով, շատ շուտով շօշափելիէն կը վերածուի վերացականին, նիւթականէն գաղափարայինին, եւ առ այդ՝ կու գայ կազմելու մէկ մասը ոգիին, տիեզերական այն ոգիին՝ զոր «աստուած» կը ստորոգէ բառ—խմացութիւնը հայերէն լեզուին: Ինքնաբաւ, ամենապարփակ եւ գործօն այս ոգին է, որ մարդէն պիտի ստեղծէ հերոսը, հերոսէն՝

աստուածայինը, եւ այդ բոլորին ընդելուզումով եւ միախառնումով՝ տիեզերականն ու յաւերժականը:

Մարդ—հերոսը առաջին քայլն է դէպի համաստուածային ոգին, տիեզերականութիւնն ու յաւիտենութիւնը:

Մարդ եւ հերոս այս զուգակցումը, միացումը եւ միաձուլումն են որ կը կերտեն անկախ ինկած էջերը պատմութեան, որոնք իրենցմէ ներս կը պահեն ոչ միայն յիշողութիւնը հաւաքական էութեան, որ հերոսն է եւ ապրող ու տեւող ներքին ուժը անհատին, այսինքն՝ անոր ոգին, այլ նաեւ ժողովուրդին, որ ազգն է որոշ պարագաներու մէջ եւ պայմաններու ներքեւ: Իսկ ազգը արտանձնական դրսեւորումն է որոշ հաւաքականութեան մը՝ տարածքի, միջոցի եւ ժամանակի տուեալներով պայմանաւորուած: Հաւաքականութեան մը լինելութեան գործընթացը հաւաքական իր եսէն դուրս գալով եւ չորրորդ տարածքով մը առկայութեան կոչուող եսի ընծայում մըն է լոկ, որ ի վերջոյ պիտի յանգի բազմաթիւներէն մէկն արարելու եւ շատերով մէկն իրագործելու ներքին եւ ներմուշ արարքին: Հաւաքականութենէն կերտուած եւ արարուած այդ մէկն է աստուած—էակը, որ կ'ենթադրէ նոյնացումը, միութիւնը, միացումը, միաձուլումը եւ ապա մէկութիւնը զանազաններուն, անջատ հաստուածներուն, անզօղ անհատներուն եւ հաւաքականութիւնը կազմող՝ այլ լոկ գիրարամբողջացնող մարդկային էակներուն: Այս մէկութեան արարումի ճամբուն արձանագրութիւնն է պատմութիւնը ժողովուրդին, իսկ այդ արձանագրութեան դասուած ու դասաւորուած ընծայումը՝ պատմագրութիւնը:

15.

Այդքան ատեն որ հաւաքականութիւն մը կ'ապրի իր հերոսներով՝ ինքզինքն արդէն իսկ նետուած կը գտնէ խորհուրդէն ներս անիմանալիին, անընկալելիին եւ անտարագելիին, եւ ինկած՝ յակուրջիէն ներս թանձր վիպապաշտութեան մը, ահա թէ ինչո՞ւ համար անիկա միշտ ալ կը գտնուի մասքաժան գիծին վրան մարդկայինին եւ աստուածայինին, նիւթականին եւ հոգեկանին, շօշափելիին եւ վերացականին, եւ մութին ու լոյսին, եւ անկարող է կատարելու անհրաժեշտ ուստումը մէկէն միւսին եւ գտնելու իր պատկանելիութեան իրաւն իրմէ ներս: Այսպիսի հաւաքականութեան մը պատմութիւնը կը ներկայանայ որպէս երկարածիզ շարք մը հերոսապատումներու, որմէ ներս անպայման կան մարդը, հերոսն ու աստուածը, այսինքն՝ այդ հերոսապատումներուն թիկունք կանգնելու կու գան հերոսականն ու դիւցազնականը, որոնք միասնաբար թռիչք կ'առնեն դէպի աս-

տուևածայինը՝ այս բոլորը այլ բան չեն եթէ ոչ թուիչք մը նիւթականէն դէպի ոգեղինացում, խաւարէն դէպի լոյս, հողի շնչոյ կաւէն դէպի ոգին, որ թարգմանի՝ հասարակէն դէպի սրբազնացումն անոր: Այս բոլորին քննական աւելի մօտ մատչում մը, սակայն, պիտի ցոյց տայ, թէ հերոսական եւ դիւցազնական այս պատուածներն զգացական են աւելի, եւ յաճախ՝ առհաւակական, եւ որպէս այդպիսին ալ կը պատկանին ուրիշ ժամանակի եւ այլուրային տարրեր պահի ու վայրի: Այսուհանդերձ՝ անոնցմէ անբաժան կը մնան բոլոր յատկանիչերն ու ստորոգելիները մարդկայինին ու մարդկայնականութեան, բոլոր առաքինութիւնները հին ու նոր կրօններուն, բոլոր քաշերը խիղճին ու խղճմտանքին, առաւել՝ բոլոր բախումները չարին ու բարիին եւ զրականին ու ժխտականին, որոնք գոյութեան կը կոչուին դարերու անցքին հետ եւ ժամանակի հոլովոյթին:

Այս բոլորին մէջ հիմնական կը մնան միջոցն ու ժամանակը, որոնց վրայ հիմնուած կը գտնենք քաղաքակրթութեան յղացքը: Իրականութեան մէջ, ինչպէս կը հաստատէ Ֆրանսացի ընկերարան եւ բժիշկ կրօն՝ «քաղաքակրթութիւնը բաց պայքար մըն է ժամանակի եւ միջոցի շրջանակին դէմ, զոր տիեզերքը կը պարտադրէ մեզի: Ամէն անգամ որ կ'աւելցնենք մեր «արագութիւնը»՝ գայն կը յայտարարենք յաջողութիւն՝ անոր մէջ տեսնելով զօրաւոր հետքը յաղթանակի մը, որուն շնորհիւ մեր իմացականութիւնը եւ բանականութիւնը կը քայքայեն սահմանները եւ արգելքները: Այլ տեղեր, սակայն, ուր իմացական կառոյցի երկու այս տարրերը՝ [ժամանակն ու միջոցը] նոյն ուժգնութեամբ չեն տիրեր մարդկային անհատականութեան վրայ՝ տարրեր է գնահատում [անոնց: Եւ] այս միջոց-ժամանակ շրջանակը կ'ընդունուի իր բնական նկատուած սահմաններուն մէջ»³⁸:

Ինչ որ ալ ըլլայ իրողութիւնը սակայն՝ ժամանակն է որ յաւելումովը միջոցին ու տարածականութեան՝ հաւաքականութիւն մը կ'ընծայէ ժողովուրդ՝ կեանքի ու պատմութեան, հաւաքական յիշողութեան եւ ազգային ինքնագիտակցութեան ունջերը խրած բարիքովն անոր առհաւակական արմատներուն: Ա՛լ անկէ ետք ոստում մը դէպի կերտումը ազգին՝ այդքան ալ դժուար չի թուիր ըլլալ: Ժողովուրդ մը, սակայն, միաւորումն է զգացական պատկանելիութենէ մը յառաջացած անհատ-էութիւններու: Մարդ-էութիւնը, կամ ընդհակառակը, էութիւն-մարդը, անհատականացումն է ժամանակի կենդանականէն գոյութեան կոչուած իմացական, հոգեկան եւ բարոյական միախառն յղացքի մը, որ որքան որ ինքզինքէն ներս կը պարփակէ իմացքը ֆիզիքական եւ նիւթական իրաւութեան՝ նոյնքան նաեւ եւ գուցէ աւելի՝ ոգեկան արժէքներուն եւ կշիռին:

Ծի՛շդ հոս ալ Ֆրանսացի ընկերարանը կը փութայ հաստատելու, թէ «ամէն բանէ առաջ մարդուն կազմն ունի ֆիզիքական մեքենականութիւն մը, որուն տարրերը յարաբերաբար շատ ծանօթ են: ... Նոյն ատեն՝ մար-

դուն կազմն ունի իմացական մեքենականութիւն մը, որ գիտականօրէն նուազ է պեղուած քան Ֆիզիքական եւ հիւսկենային մեքենականութիւնը: ...Սակայն ճիշդ հոս ալ կը կայանայ հիմնական առաջին շեշտադրումն այս բացատրութեան, [թէ] բոլոր մարդերէն ներս կան նո՛յնքան կարեւոր այլ տարրեր եւս: Գիտութեան վատ ծանօթ՝ անոնք մերթ կ'անգիտացուն կամ նոյնիսկ կը մերժուն գործերուն մէջ կարգ մը գիտնականներու կամ իմաստասէրներու: [Սակայն] ի՛նչ որ ալ ըլլան անոնք՝ անոնք կը համապատասխանեն ընթացիկ բառամթերքի արտայայտած իմացքներուն: Այսպէս՝

«Ներգործութիւն

«Ներեակայութիւն

«Յուզականութիւն

«Գեղեցիկի զգացողութիւն [եւ]

«Սրբայնացումի զգացողութիւն

«...Իւրաքանչիւր անհատ ունի բոլոր այս տարրերը, ու երբ ըսուի, թէ, եթէ անոնք ունին արդար հաւասարակշռուածութիւն մը անոր մօտ, անկա «բնական մարդ» մըն է՝ պիտի հասկնանք այս բոլորը, բան մը որ մեր նպատակն է»³⁰:

Այս բոլորին գնահատումն ու կշռադատումը կատարելու պարտականութիւնը, սակայն, ո՛չ թէ պատմաբանինն է, պատմագիրինը եւ պատմագրագէտինը՝ այլ մանաւանդ իմաստասէրինը, իսկ ոեւէ պատմագիր եւ պատմագրագէտ մաս մը իմաստասէր է արդէն եւ տեսարանը հոգիին ու միտքին բնազանցական դրսեւորումներուն, եւ բացայայտիչը՝ իմացական ներքին ոլորտներուն, որովհետեւ առանց ըլլալու այդպիսին՝ դժուա՛ր թէ անկա կարենայ լոյսին բանալ ծալքերը ինչպէս անհատին՝ նոյնպէս նաեւ հաւաքականութեան մը կեանքին, գծել ընթացքն անոր օրերուն եւ այդ վերջիններն իրաւ եւ ապրուած ընծայող բաներուն, որոշել ուղղութիւնն այդ ընթացքին, դասել ու դասաւորել տարրերն ու հոսքը լոյսին բացուող արտաքին ու ներքին իրականութիւններուն եւ ապրումներուն, խոհ ու բանին, ջիղէ եւ զգացականութենէ անցած զգայնութեան, եւ ճշմարտութեան եւ ստուգութեան հանդերձանքն զգեցող ներքին մթնոլորտին:

Իրաւ եւ անխարդախ պատմաբանն ա՛ն է, որ կարող է գուգորդել անհատն ու հաւաքականութիւնը, որոնցմէ առաջինը Ֆիզիքական գոյութիւն մըն է նախ՝ անկախ իր ներաշխարհէն եւ հոգեկան ու իմացական դրութենէն, մինչ երկրորդը՝ այդպիսի գոյութենէ մը անդին կեցող վերացական ընկալո՛ւմը շօշափելի, թանձր եւ նիւթական հիմնաւորումէ մը յառաջացած յղացքի մը: Պատմութիւն չէ անհատը՝ այլ պատմութիւն մը, մինչդեռ այդպիսին է հաւաքականութիւնը, իսկ այդ վերջինով է որ առաւելաբար կը զբաղին պատմաբանն ու պատմագրութիւնը:

Բայց պատմագրութիւնը գիտութիւն մըն է ամէն բանէ առաջ՝ ինչպէս կը հաստատէ ամերիկացի Փիթըր Կէյը, «ո՛չ աւելի, ո՛չ պակաս»⁴⁰, այսուհանդերձ կա՛ն պատմագրութիւնը կեղծ գիտութեան մը ստորոգումովը դրասանդոդներ, որոնք դիւանագիտական եւ քաղաքական ճամարտակութիւններէ յառաջացած խճճումի մը մէջ ինկած՝ կը տուայտին ու կը տագնապին մերթ: Այսպիսիներէն կարելի է գտնել նոյնիսկ կարգ մը պատմագիր—բանասէրներու եւ պատմաբան—պատմագրագէտներու շարքին, մանաւանդ անոնց՝ որոնք խրած անցեալի մութին մէջ եւ անել թնճուկին՝ իրենց այժմու դիրքերէն կ'ուզեն դիտել ու դատել երէկը եւ հակադրել զայն ներկային եւ անոր պահանջներուն: Արդարեւ՝ երէկի պատմաբանն ու բանասէրը՝ այլ Հայաստանի Հանրապետութեան այժմու նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանն ինքն է որ կը յայտարարէ, թէ «մի՛ մոռացէք, որ ես պատմաբան եմ: Ես այսօր գործնական քաղաքականութեան մէջ Ե տարիներ գրաւուած լինելուց յետոյ, պատրաստ եմ վստահ յայտարարել, [թէ] պատմութիւնը կեղծ գիտութիւն է: Ոչ մի պատմաբան սա չի հասկանայ, մինչեւ ինքը չմասնակցի պատմութեան արարմանը: ...Կեղծ քաղաքական կատեգորիա է նաեւ «ազգային գաղափարախօսութիւն» հասկացողութիւնը, որովհետեւ ժողովրդավարութեան պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մի միասնական գաղափարախօսութեան շուրջ: ...Հարցերի խորքը թափանցելու պարագայում ակնյայտ է դառնում, որ իրականում «ազգային համաձայնութիւն» հասկացողութիւնն ընդամէնը կեղծ քաղաքական կատեգորիա է, որովհետեւ ազգի գոյութիւնն ինքնին ազգային համաձայնութեան իրողութիւն է»⁴¹:

Սա հաստատումն ինքին կ'ենթադրէ առկայութիւնը տագնապին, որուն դէմ յանդիման կեցած՝ պատմութեան երէկի մասնագէտը կը փորձէ դուրս գալ այսօրուան իրականութեան յարուցած դժուարութիւններէն եւ կայանքներէն: Իրականութեան մէջ՝ անոնցմէ ազատագրուելու միակ միջոցն է մերժումն անոնց, այսինքն՝ ուրացումը բանի մը, որուն ծառայեց անիկա տասնամեակներով: Հոս արդէն ի յայտ կու գայ անկամըջելի տարբերութիւնն ընդմէջ դիւանագէտին եւ պատմաբանին, որոնցմէ երբ մէկը դէմ յանդիման կը կենայ ընդհանրականէն տարբեր նկարագիր ունեցող անջատ իրականութեան մը, զոր հայերէն լեզուն կը ստորոգէ «դէպք» կամ «պատահար»՝ միւսն արդէն գործ ունի հաւաքականին հետ, որ կեանքն է եւ պատմութիւնը՝ անջատ ինկող դէպքերուն շարայարումն ստեղծող ժողովուրդէն:

Երկու պարագաներուն ալ՝ հոս կայ փորձը իրարմէ անջատելու ան-

հատն ու անհատներէ կազմուող խմբաւորումը, աշխնքն՝ անհատականն ու հաւաքականը, եւ տարրալուծարանային ճիգ մերժող աշխատանքով մը, որ հոս կը դրսեւորուի կտրուկ հրամայականովը հաստատումին, բաժնելու զանոնք իրարմէ եւ անոնց մերժելու ո՛չ միայն կարելիութիւնը զուգահեռականներու առկայութեան՝ այլ մանաւանդ իրաւունքը զուգահեռականներ կազմելուն: Ասկէ՛ անոնց մօտ մերժումը անհատներու հաւաքականութիւն կազմելու իրաւունքին եւ կարելիութեան, բան մը՝ որ գոյութեան փաստն իսկ է պատմութեան հոլովոյթին: Իրաւ է, որ կայ փաստը հակառակին նաեւ, որ, սակայն, առկայութեան կոչուած կը գտնենք կա՛մ բնական ահեղ աղէտներու պատճառով եւ կամ ալ՝ աշխարհասօսան մարդկային աղէտներու: Նոյնիսկ այդ վերջին պարագային, գոնէ վերջին տասը դարերու ընթացքին հազուադէպ կերպով կարելի կ'ըլլայ գտնել չքացումը հաւաքականութիւններու: Վերջին հեղ անոր կարելի է հանդիպիլ Պոլսոյ անկումով ստեղծուած թոհուրոհէն ետք սահմաններէն ներս Բիւզանդական Կայսրութեան եւ տափաստաններուն մէջ արեւելեան Եւրոպայի, Գոլոմպոսեան գիւտէն ետք տարածքէն ներս Նոր Աշխարհին, եւ Հայկական Տասնհինգէն ետք սահմաններէն ներս Օսմանեան Կայսրութեան:

Ինչ որ ալ ըլլան իրականութիւնները՝ անոնց դէմ յանդիման գտնուող պատմաբան—քաղաքագէտը, կամ քաղաքագէտ—պատմաբանը¹², կորսնցուցած շատ բան իր հիմնականէն եւ անով դրսեւորուող հանգամանքէն՝ յաճախ անկարող կը մնայ իրմէ ներս կատարելու իրարահաւասար նօտումը այդ երկուքին՝ քաղաքագէտին եւ պատմաբանին, ու կ'իյնայ շփոթի մը կորանքին, եւ իր դատումին մէջ՝ կորանքի կը տանի նաեւ քիչ մը ամէն երեւոյթ եւ հաւաքականութեան ամէն առողջ բնազդ:

Պատմագրութիւնը սակայն, եւ անոր հետ պատմութիւնը նաեւ, արձանագրութիւնն է այդ «քիչ մը ամէն երեւոյթ»ին, «կորանք»ին եւ «բընազդ»ին, որոնք գրական կամ ժխտական՝ կը տեւեն յիշողութեանը մէջ հաւաքականութեան, ժողովուրդին եւ ազգին, եւ անոնց կը պարգեւեն ազգային ինքնութիւն:

17.

Չկա՛յ հաւաքական կամք՝ այլ յաճախ բռնադատումը եւ ճնշումը անհատ կամքի մը եւ անկէ ծագած որոշումի խտացումը հաւաքականութիւնը կազմող անհատներու կողմէ: Հաւաքական ո՛չ մէկ կամք, ինչպէ՛ս որ ալ յառաջացած ըլլայ անիկա եւ ի՛նչ ձեւով ալ տարագուած, կ'ենթադրէ ընդհանրութիւն մը՝ պարզ ա՛յն պատճառով որ սակաւ է թիւն անոնց որոնք կարող են մտածել նոյն ձեւով, զգալ եւ արտայայտուիլ նո՛յն կեր-

պով, եւ արտասանուած բառն ընկալել ճի՛շդ այնպէս՝ ինչպէս որ է անիկա իրաւամբ, ինչպէս որ կ'ընդունին զայն ուրիշներ, եւ ինչպէս որ կ'ընկալէ անոր ներքին բովանդակութիւնը զայն արտասանողն ի՛նք: Անհատ մարդէն ներս կայ գերբնական ո՛չ մէկ ուժ, կար ու կարողականութիւն, եւ կրթանք ու կարգապահութիւն, որ խօսքն ընծայէ նոյնը բոլորին համար եւ բոլոր ժամանակներու տեւողութեան, եւ նոյնիսկ նոյնը՝ այլ պահերու ընթացքին եւ տարբեր պայմաններու ներքեւ զայն արտաբերող միեւնոյն անձին, ի՛նչ փոյթ որ բոլոր ժամանակներու մէջ ալ արտաբերուող խօսքն ըլլայ նոյնը եւ փորձէ ունկնդիրին հաղորդել միեւնոյն իրողութիւնը³: Կըրնան գտնուիլ Ֆիզիքական երկուորեակներ, մերթ քիկ մըն ալ զգացական երկուորեակներ, այլ երբեք հոգեկան եւ իմացական ստորոգումովն անոնց: Եսի նոյնութիւն մը եւ անհատականի նոյնամանութիւն մը հազիւ թէ գան իմացումի եւ տարազումի: Միտքի եւ մտածումի, հոգիի եւ ոգիի նոյնացում մը անհեթեթին միտող իրականութիւն մըն է եւ անխորհուրդ կըրկնութիւնը մէկուն կամ միւսին, որովհետեւ անհատին ինքնութիւնն ու ինքնուրոյնութիւնը իրենց արմատները պահած ունին ո՛չ միայն խորերը ժառանգի ու ժառանգականութեան անունն ալքերուն՝ այլ նաեւ բնութիւնն իրաւ ընծայող եւ անոր առկայութեան խոհ ու խորհուրդ պարզեւող տարբերուն, միջոցին ձեւ ու մարմին տուող իրականութիւններուն, անհատ մարդերուն եւ անոնցմէ յառաջացած փոխարարբերութիւններուն, անոնց իրարու հետ ունեցած առընչակցութիւններուն եւ տարբերութիւններուն, ընկերութիւնը գոյութեան կոչող մարդկային անկազմակերպ ամբոխին եւ անկէ ներս առկայ անհատական եւ խմբական բախումներուն, անհատ մարդուն հաւաքական թէ անձնական, կրօնական թէ բարոյական, ընկերային թէ քաղաքացիական դաստիարակութեան, կրթանքին եւ կազմաւորումին, անոր Ֆիզիքական եւ ընտանեկան կառոյցներուն, անոր խօսքի եւ ձայնի, եւ բառ ու բանի արտայայտչականութեան եւ անոնց եղանակաւորումին, եւ տակաւին այն բոլոր բաներուն, զորս ոչ մէկ մարդ կը փորձէ անցընել քննութենէ, լուծել ու վերլուծել, եւ ապա ենթարկել դասի ու դասաւորումի եւ մտցնել կարգի ու կանոնի կաղապարումէն ներս, որովհետեւ պարզ եւ առօրեայ տուեալներ են անոնք եւ հասարակ տեղիք, չմասնաւորուած իրականութիւն, եւ իրենց գոյութեան սահմաններէն ներս իսկ անմերժելի իրաւութիւն, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս որ են տարբերը բնութեան եւ միջոցին, ինչպէս որ են լոյսն ու ջուրը, օդը եւ դալարին եւ բազմաթիւ այլ բաներ՝ առանց որոնց վստահօրէն պիտի դադրէին միջոցը, անջրպետն ու տիեզերքը, ծիր կաթիններն ու միզամածները եւ անոնց հետ նաեւ բնական, մարդկային, իմացական, հոգեկան, տիեզերական թէ յաւիտենական ժամանակը, եւ հեղ մը եւս տիրէր քառսը ներքին եւ արտաքին աշխարհներուն եւ ճակատներուն վրայ, եւ ըլլար մ'ո՛ւթ, բացարձակ կերպով

մութ:

Հանդրիճուած եւ ամփոփուած իր ամբողջականութեան եւ ինքնաբաւութեան պարունակէն ներս՝ անհատը ե՛ս մըն է լոկ, գիտակցութեան հասած աշխարհ մը, խոհ ու խորհուրդով թրթռացող տիեզերք մը, որուն բաղկացուցիչ տարրերն իրարու հետ կը գտնուին ա՛յն յարաբերականութեան մէջ եւ առընչութեան՝ ինչ որ են տարրերունը եւ հիւլէններունը տիեզերական անհամար տարածքներուն եւ միջոցներուն: Անհատին այս ինքնամբողջութիւնն է որ կը թաւալի կորիզին վրան իր եսին եւ ինքնութեան, եւ որուն պայթումն ու մասերուն տարանջատումը կը յառաջացնեն հաւասարակչութեան կորուստ մը ո՛չ միայն անհատին ներս՝ այլ նաեւ անոր պատկանած հաւաքականութեան: Առաջին պարագային՝ անհատը կը դադրի ես մը ըլլալէ ու կ'ընծայուի ինքնագուրկ էակ, որուն համար գիտութիւնն ունի որոշ ստորոգում, երկրորդին՝ կազմակերպուած հաւաքականութիւնը կը փոխակերպուի ամբողջի: Իր եսին եւ հոգեկան կառոյցին աւանդաբար եւ յաճախ անգիտակից պարփակումին մէջ, գուցէ եւ արգելափակումին, անհատը ինքնաբաւ է այդքան՝ որքան որ է տիեզերքն իր դրութեան մէջ, այսուհանդերձ, հակառակ անհատի եւ եսի իր ինքնուրոյնութեան եւ ինքնաբաւութեան, անիկա ենթակայ է յարաբերականութեան օրէնքներուն եւ զանազան, այլազան եւ տեսակաւոր ազդեցութիւններու: Իրականութեան մէջ՝ որքան որ յարաբերականութիւնը հաւասարակչող ուժն է տիեզերքի մը բաղկացուցիչ տարրերուն՝ նոյնքան է նաեւ մարդերունը, որոնք կը կազմեն ընկերութիւնն ու հաւաքականութիւնը, եւ ժողովուրդն ու ազգերը: Ահա թէ ինչո՞ւ համար անհատները կան իրարմով եւ իրարու համար, եւ անոնց գոյութիւնը շարունակականութիւնն է կեանքին, մինչդեռ անհատ մարդն իր առանձնութեանը մէջ եւ մէկութեան՝ շարունակականութեան մէջ ակնթարթ մըն է լոկ, որմէ ետք զայն պարփակելու կու գան չգոյութիւնն ու անէութիւնը միայն:

Սակայն ապրող, տեւականացող եւ շարունակականութեան մը բարիքովը դրասանգուած անհատներու անքակտելի եւ միաձուլ հաւաքականութիւն մըն է ժողովուրդը, որ կ'ենթադրէ հաւաքական մէկութիւն, նոյնութիւն եւ նոյնանմանութիւն: Սակայն իրարմէ տարբեր յղացքներ են «նոյնութիւն»ն ու «նոյնանմանութիւն»ը: Առաջինը կ'ենթադրէ ամբողջական համապատասխանութիւնը առկայ գոյութիւններու եւ գոյացութիւններու եւ կրնայ տեղ գտնել լոկ երեւակայութեան մէջ եւ խտէային, ու կը հանդիսանայ կրկնութիւնն ու բազմաւորումը մէկութեան, մինչդեռ նոյնանմանութիւնը այլազանութիւնն իսկ է՝ նմանողութեան մէջ: Նմանութիւնը կամ նմանողութիւնը նոյնութիւն չեն ենթադրեր բնաւ, չեն ենթադրեր նաեւ ինքնակրկնում, ինքզինքն ըլլալով ուրիշն ըլլալու կարելիութիւն, եւ ինքզինքէն դուրս իր ներքինով դրսեւորուող արտա յայտութիւն⁴⁶:

Հաւաքականութիւնը գումար մըն է նոյն անմաններու, եւ ամբոխ մը՝
երբ անոր կը պակսի հոգեկան ներքին կարգապահութիւնը, բայց երբեք
նոյնութիւնը, ահա թէ ինչո՞ւ համար պատմութեան ընթացքին անհատնե-
րէ արարեալ հաւաքականութեան մը միշտ ալ պակսած են միատարրու-
թիւնն ու նոյնութիւնը, եւ ա՛յդ իսկ պատճառով՝ միատեսակ, միաբովան-
դակ եւ միահաղոյն պատմութիւնն անոր: Զիրար խաչածեւոզ եւ կոխկո-
տող, իրարու վրայ կուտակուելու եկող եւ իրարմով ամբողջացող, այլ նաեւ
մերթ զմերար չէզոքացնող, զիրար քանդող ու քայքայող, եւ տակաւին ի-
րարմով նորոգուող եւ զօրացող, եւ իրարմով վերստեղծուող ու վերակեր-
տուող ուժերու ներհոսք մըն է անիկա՝ պատմութիւնը հաւաքականութեան
մը, որուն բազմադարեան եւ բազմամբոխ յիշողութիւնն է որ պիտի դասէ
եւ դասաւորէ պատմարանը կամ պատմագիրը, եւ անոր մութ քառսէն եւ
խառնիճաղանջ էութենէն ստեղծէ այն լոյսը, որ ճամբայ պիտի բանայ ի-
րարայաջորդ սերունդներու ապրումին եւ գոյացումին:

Ահաւասիկ ներքին այս լոյսն է եւ տարագումի չեկող այս փողփողու-
մը զորս հոգի կը կոչէ իմացապաշտութիւնը, եւ ես, կամք, ներուժ, եւ տա-
կաւին բազում այլ ստորոգումով հայերէն բառամթերքը: Այս բոլորին
համընդհանուր մէկ ընկալումն է ոգին, որ էլ այն վիթալին է անգլիացի Քար-
լային, Ֆրանսացի Պերկսոնին եւ գերման Նիցչէին, եւ առ այդ՝ կը գտնուի
դուրս ժամանակի եւ տարածալի միջոցի ընկալումէն, եւ անմիջապէս որ
իյնայ կաղապարէն ներս անհատին գոյառումին, գոյացութեան եւ գոյու-
թեանականութեան՝ կ'ընծայուի ներքին այն ուժը, այն կորովն ու ներմղու-
մը, այն ներգոյացականը, որոնց համընդհանրականութիւնը կ'անհատա-
կանացնէ ապրող եւ շնչող էակ մը եւ անջատ գոյութեան իրաւունք կու
տայ անոր: Սերունդէ սերունդ եւ ժամանակէ ժամանակ փոխանցուող ու
տեւող ոգեկան իրաւութիւնն է անիկա: Եւ եթէ այժմ հայու մեր հաւաքա-
կանութեան մէջ մեզմէ շատերուն համար աննշմար կը մնայ արտաքնա-
պէս վկայելի ոչ մէկ գործօնութիւնն անոր, որ կու գայ դարերու խորքէն
եւ հայու մեր ճանաչողութեան անվերձանելի եւ անհասանելի ունջերէն՝
հո՞ն է անիկա սակայն, զինք կարելի ընծայող բաներէն ներս, եւ ա՛յդ իսկ
պատճառով անուրանալի, անմերժելի եւ անդրժելի, ճիշդ այնպէս՝ ինչ-
պէս որ են տարրերը հայութիւնը կազմող հաւաքականութեան:

18.

Պատմարանին կողմէ խորացում մը տուեալ հաւաքականութեան մը
պատմութիւնն եզոզ անցեալէն ներս եւ անոր կարելի սահմաններէն՝ կ'են-
թաղրէ նոյնացում մը այդ անցեալին հետ եւ զայն իրականութեան կոչած

հաւաքականութիւնը կազմող մարդերուն: Որոնում մը այդ վերջիններուն արմատներուն եւ անոնց առհասարակ պատկանելիութեան պեղումն է անոնց լուսաւոր ու մութ ծալքերուն, ուր հանդուցուած կը մնան ծանօթ ու անծանօթ եւ հեռու ու մօտ հանգրիճումները այդ հաւաքականութիւնը կազմող տարրերուն: Այդ պեղումի ընթացքին է, սակայն, որ պատմութեան ուսանողն ինքզինք կը գտնէ ընտրութեանն առջեւ երկու կարելիութիւններու — կա՛մ անսակարկ մերժումը ներկայացող տուեալներուն, կամ ալ ամբողջական համաձայնութիւն մը անոնց հետ: Երկու պարագաներուն ալ անիկա դիւրին կերպով պիտի անձնատուր չըլլայ անոնց: Ընդհակառակը՝ առնելէ առաջ առաջին քայլն իր մատչումին՝ անիկա պիտի անցնի հոգեկան եւ հոգեբանական, իմացական եւ բանական որոշ վերիվայրումներէ, որոնց օժանդակելու եւ թիկունք կանգնելու պիտի գան անհատական եւ նկարագրային իր կառոյցը, իր առօրեայ ձգտումները, իր փառասիրութիւններն ու գիտական պահանջները: Իր տարած աշխատանքի ընթացքին անոնցմէ լո՛կ մէկն է որ պիտի որոշէ ընթացքն իր գործունէութեան, եւ թեւ տայ պատմութեան փապուղիներուն եւ կուղպ դարպասներուն եւ անոնց ընձեռած անակնկալներուն առջեւ տքնող եւ արտայայտութիւն փորձող իր հոգիին, առաջնորդ հանդիսանայ իր քայլերուն եւ ուղղութիւն տայ անոնց, մինչդեռ պատմաբանի եւ պատմագիրի ասպարիզային իր նախապատրաստութիւնը եւ կրթանքը պիտի մղեն զինք, որ փորձէ իր առաջին քայլին բերելու իր երկրորդը, եւ այդ ձեւով ստեղծելու յաջորդականութեան շղթան, որ պատմագրութեանն է: Այսուհանդերձ, եւ ի՛նչ որ ալ ըլլայ իր ընտրութիւնը, անիկա ստիպուած է ըլլալ բացսիրտ եւ բացմիտք՝ խուսափելու համար մերժումի ճամբուն վրայ գտնուող անակնկալներէն, եւ իր համաձայնութեան պարագային՝ կշռադատումի չեկող փաստերու եւ տուեալներու մերթ անհունօրէն հաճելի գրաւչութենէն:

Ահաւասիկ պատմութեան ա՛յս ուսանողն է, որ վարպետ սուգակի մը հանգոյն ստիպուած է իջնել խորերը տուեալ հաւաքականութեան մը կեանքին, որսալ անոնցմէ ներս առկայ նուազագոյն՝ այլ էական տարր, ժամանակէն, վայրէն եւ կեանքէն ներս որոշակի դեր խաղացող անհատի ամէն նիւթ ու փշրանք, եւ ապա՝ այդ բոլորն անցընելէ ետք մաղէն ու բովէն կարելի ու մանրագնին քննութեան՝ դասէ ու դասաւորէ ընթացքն իր հետաքրքրութիւններուն եւ հետաքրքրասիրութեան, եւ կազմէ ծրագիրն ու յայտագիրը պատմագիրի իր աշխատանքին: Արդէն, ինչպէս տեղ մը կը հաստատէ Ֆրանսացի Ամպելէնը՝ «պատմագիտութեան ոճն է ըլլալ անողոք, որովհետեւ անիկա չի կրնար կասիլ կամ սահմանափակուիլ բացարձակ որեւէ արգելքով: Աւելին՝ բնութեամբ հետաքրքիր է իսկական պատմաբանը: Անկէ ներս կայ մասնիկ մը դատախազէն: Եւ բացարձակ լուութիւնը որ կ'ենթադրէ ասպարիզային [խախտում]՝ կասկածելի է անոր համար,

որովհետեւ հոն է առկայութիւնը պատասխանի մը մերժումին: Այս մերժումը կը սքողէ կարեւոր բան մը, ուրեմն այս մէկն է զոր պէտք է պեղել: Ընդհակառակը՝ համակերպող պատմաբան մը հասարակ պատմագիր մըն է, [եւ] հլու մատենաքաղ մը, իսկ բոլորովին այլ բան է անոր դերը»⁴⁵:

Իրականութեան մէջ՝ պատմագիրին կատարելիքը ճամբորդութիւն մըն է դէպի անձանօթ հորիզոնները որեւէ հաւաքականութեան, եւ որուն ընթացքին քիչ անգամ չէ որ պիտի սայթաքի անիկա եւ կենայ փակուղիներուն առջեւ ամրօրէն կղպուած դարպասներուն, եւ եթէ որոշած է անպայման հասնիլ ենթադրաբար գոյ՝ այլ իրեն համար տակաւին անձանօթ հանգրուանի մը՝ իրեն համար անհրաժեշտ է կատարել անկարելին, տապալել բոլոր խոչընդոտները, եւ հարթել ուղին պեղումի եւ ուսումնասիրութեան իր յառաջընթացին, եւ ոչ թէ կատարել շրջանցում մը, նետել արուեստական կամուրջ մը իր յառաջընթացին մէջ առկայ փոս ու վիհներուն վրան եւ իրարու կապել անջատ երկու ափերն անոնց, իրարու ազուցել ժամանակի մէջ իրարմէ հեռու կեցող հատուածներ եւ շարունակել ճամբան, եւ այս բոլորը՝ մերթ ստիպումին ներքեւ որոշ գաղափարաբանութեան մը, վասն քաղաքական որոշ նպատակի մը, եւ երբեմն փրկելու համար անելանելի կացութիւնը, որով շրջապատուած է անձնապէս:

Յստակ է, որ այս ձեւով կարելի պիտի ընծայուի ժամանակաւոր յառաջընթացը որոնումին եւ պեղումին, ուսումնասիրութեան եւ խորացումին, որ, սակայն, անպայման փոխած պիտի ըլլայ խորք եւ ուղղութիւն, ընծայուի ոչ—ճիշդ եւ ճշգրիտ, եւ դառնայ հաճելի՝ կեանքին եւ ընկերութեան ղեկն ունեցողներուն համար: Այժմ փոքր որեւէ ակնարկ պատմագրութեան ա՛յս կերպ ընթացքին վրան նետուած՝ պիտի ցոյց տայ առկայութիւնը բազմաթիւ «սպիտակ էջ»երու: Մէր որ կան անոնցմէ՝ կան նաեւ կա՛մ շրջանցումներ՝ վասն անհատական ապահովութեան եւ շահի, եւ ինքնակամ մոռացումներ ու գիտակից կամրջումներ՝ վասն գաղափարախօսութեան եւ քաղաքականութեան, եւ կամ ալ՝ կամաւոր խեղաթիւրումը, նպատակաւոր նենգափոխումը եւ գիտաւորեալ կեղծարարութիւնը պատմութեան՝ վասն հանրային կարծիքի կազմաւորումին եւ քաղաքական յառաջընթացին: Բոլոր պարագաներուն ալ՝ իրաւ պատմագրութիւնը պիտի մերժէ այս բոլորը, մանաւանդ արուեստականօրէն կամրջումը անջատ պատահարներուն, եւ առ այդ՝ առկայութիւնը «սպիտակ էջ»երու:

Հաւաքականութեան մը պատմութիւնը՝ զրական կամ ժխտական, ժամանակաւոր կամ երկարժամեայ, լուսաւոր կամ մութ՝ անմերժելի կեանքն իսկ է անոր, իսկ կեանքէն ներս չկան «կանգառ»ներ եւ «կասում»ներ, այսինքն՝ կեանքին յաջորդականութիւնը որ անդուլ հոսանք մըն է միայն՝ կը մնայ տոկուն եւ անուրանալի պատճառականութեան մը վրայ եւ չի ճանչնար որեւէ հատածում:

Պատճառականութիւնը որ իր պարզագոյն ձեւին մէջ պատճառ—արդիւնք—պատճառի դրոյթ մըն է լոկ⁶⁶։ Պիտի դժէ ուղին Հաւաքական գոյութեան, եւ հոն դեր չունին բախտն ու ճակատագիրը, որոնք ստորոգումն են յաճախ չընկալուած եւ անտարագելի մնացած պատահարներուն եւ դէպքերուն, որոնք արդիւնք են եւ Հետեւանք, եւ անոնց հետ՝ ճակատում մը մերժելու իրաւութեան, աւելին՝ առնականութեան, իրաւունքի եւ իրաւասութենէ կամաւոր կերպով հրաժարումին, եւ ճակատագրապաշտութեան մը, որ կ'ենթադրէ պատասխանատուութենէ խուսափում եւ պարտաւորութիւններու ուրացում։ Այս դրութեան մէջ՝ «սպիտակ էջ»ը պատճառի մը հետեւանքին գիտակից, կամաւոր եւ դիտումնաւոր մերժումն է միայն, այսինքն՝ ուրացումը «ազգային ինքնագիտակցութեան» եւ «ազգային ինքնութեան», որ Լեւոն Արրահամեանի տարագումով՝ «որպէս բացարձակ էութիւն»՝ «իտէալական օրիէկտ» է։ Բարոյագիտական առումով՝ «դա մի իտէալ է՝ ազգի հոգեւոր ձգտումների բարձրագոյն նպատակով։ Սակայն, որքան էլ անվերապահ լինի այդ բացարձակը, այն, Ազատութեան, «Համընդհանուր բարօրութեան» եւ նման այլ գաղափարների, էականօրէն տարբեր մեկնաբանութիւնների հնարաւորութիւն է տալիս»⁶⁷, սակայն ո'չ մէկ «սպիտակ էջ»ի, պարզօրէն անոր համար որ կտրատում մերժող, ժամանակէն ներս դատարկութիւն չընդունող եւ հոլովոյթի մէջ կասում չճանչցող ճշմարտութիւն մըն է պատճառականութիւնը, որ կ'ընդունի գոյութիւնը, ըստ ոմանց, ո'չ առաջին պատճառին եւ ոչ ալ վերջին արդիւնքին։ Բնագանցականօրէն սա պիտի նշանակէր մերժումը սկիզբի մը եւ վախճանի մը, այսինքն՝ Աստուծոյ գերբնական էութեան եւ անոր բերելիք «վերջ»ին։

Այսուհանդերձ, ինչպէս որ ալ բացատրուին «սկիզբն» ու «վերջը»՝ չկայ հետեւանք առանց պատճառի, եւ չկայ պատճառ՝ առանց հետեւանքի։ Կեանքը կազմող եւ տնօրինող ընթացքի մը իրարու ազուցուող երկու օղակներն են անոնք, որոնք տեղողութեան մէջ եւ ժամանակին՝ անընդմէջ կը փոխեն նկարագրային դրոյթ, կը զգենուն յատկանիշերն իրարու, կը դառնան իրարու ծնուցիչ, կը նոյնանան եւ անբեկ ու անխախտ կերպով տեղ կը զիջին իրարու։ Այս մէկն արդէն արտայայտութիւնն է դրական ու ժխտական, արու եւ էգ հակադրութեան մը, որ հիմնական յատկանիշը կը կազմէ բնութեան տարրերուն եւ կ'երթայ փոխակերպումէ այլ փոխակերպում, երեւոյթէ այլ երեւոյթ եւ դրութենէ այլ դրութիւն։

Հաւաքական կեանքէն ներս առկայութիւնն այս բոլորին յայտարար նշանն է կեանքին, զոր գիտական միտքն ստորոգեր է «պատմութիւն», որմէ, սակայն կը բացակայի որքան առաջին պատճառը՝ նոյնքան նաեւ վերջին հետեւանքը։ Արդարեւ՝ եթէ առաջին պատճառը սկզբնաւորումն է կեանքին՝ վերջին հետեւանքը իր վախճանականութեամբ առաջին քայլն է դէպի քայքայում, խորտակում, չբացում եւ անէացում, որոնք կրնան ըն-

ծայուիլ կամ անմիջական եւ կամ ալ տակաւ զարգացող եւ յառաջացող ժխտական հետեւանք:

Իսկ ժխտական հետեւանք մը հազիւ թէ տուն տայ դրական պատճառի մը:

Հաւաքականութեան մը ամբողջական անհետացումը երէկ հետեւանքն էր ի վերուստ տրուած աստուածային կամքի եւ հրահանգի, որոնք կրնային արտայայտուիլ բնութեան ուժերուն միջոցով՝ ինչպէս կը հաւատար նախամարդը իր անտառէն ներս թէ անձաւէն, եւ կամ ալ՝ մարդկային բըրտութեամբ՝ որպէս դրսեւորումը աստուածային կամքին եւ հատուցումը մարդուն չարացումին: Մարդկային բրտութիւնը միշտ ալ դրսեւորուած մնաց պատերազմներով, նուաճումներով եւ նախճիրով: Երկու պարագաներուն ալ՝ երէկ դիւրին էին մարդկային հաւաքականութիւններուն մասնակի կամ ամբողջական անհետացումը, չքացումը եւ անէացումը: մինչդեռ այսօր՝ Երէկ արարիչի մը, այսինքն՝ առաջին պատճառի մը սրբազան տնօրինումին հետեւանքն էր պատահածը, իսկ այդ մէկուն գործիքն էին մարդերն իրենք, մինչ այսօր՝ մարդերն իրենք են տնօրէններն իրենց օրուան, եւ հետեւանքներն են ամբողջական պատերազմները եւ ջարդերը: Այսուհանդերձ՝ չկան ամբողջական չքացումներ եւ անէացումներ՝ թէպէտեւ կայ ամբողջական ընկալումն անոնց: Ընդհակառակը՝ կայ շաղախումը մարդկային հաւաքականութիւններուն եւ տեղարաշխումն անոնց: Աւելին՝ ժառանգականօրէն մէկուն կենսագործումը միւսին մէջ, մէկ հաւաքականութեան փոխակերպումը այլ հաւաքականութեան մը, մէկուն պատճառ ըլլալու հանգամանքը միւսին հետեւանք ըլլալուն իրաւութեամբ, եւ տակաւին այն մնացեալները որոնց ընդխառնումովը այլարովանդակ եւ այլատեսակ հաւաքականութեան մը պատճառն է հետեւանքի մը սաղմնաւորումին, որ հիմնովին տարբեր ըլլալով երկուքէն ալ՝ իրմէ ներս կը պահէ տարրերն անոնց, եւ պատմութեան հրապարակներուն կը ներկայանայ որպէս բոլորովին այլ գոյացութիւն:

19.

Ճակատագրականութիւնը միշտ ալ եղաւ հիմնական լարերէն մէկը նախ միջնադարեան՝ եւ ապա վիպապաշտ պատմագրութեան: Ինչպէս մարդկային միաւորը՝ նոյնպէս նաեւ մարդկային հաւաքականութիւնը տեւօրէն մնաց ծանր թաթին ներքեւ ճակատագրականութեան պայծառ կամ մթին, կամ դրական կամ ժխտական աստղին: Ըստ պատմութեան ճակատագրականութեան վարկածին՝ հին ու նոր աստուածներն են որ իրենց մատին նուազագոյն իսկ հուպովը կու գան դրոշմելու ներկան ու գալիքը

ցեղերուն եւ անոնցմէ գոյութեան կոչուող ժողովուրդներուն եւ ազգային միաւորներուն, եւ ճշգրիտ ընթացքն ու հոյովոյթը անոնց գոյառումին եւ անոնց ներքին արարող եւ ստեղծագործ ուժին ու ոգիին: Առ այդ՝ կայ մարդկային, ցեղային, քաղաքական, ռազմական, տնտեսական, կրօնական եւ ընկերային ոչ մէկ ուժ որ կարենայ արգելք հանդիսանալ անոնց ուղղութեան, կեանքի եւ արարումի սլացքին, կամ, ընդհակառակը, կորսնքին, կասեցնէ կամ շեղէ ի յառաջագունէ ճակատագրուածը եւ նախագրուածը: Այս պարագային՝ բնազանցական դրսեւորում մըն է պատմութիւնը, որուն ետին կը կենան աստուածայինն ու անոր կողմէ կատարուած տնօրինումը:

Այս բոլորը կ'ենթադրէ չքացումը կամ աւելի ճիշդը՝ չգոյութիւնը մարդկային կամքին եւ ազատութեան: Ինչպէս անհատը՝ նոյնպէս նաեւ հաւաքականութիւնը ունի ո'չ մէկ աղբրս իր օրերու լաւին հետ ու վատին: Անիկա չունի իրաւունքը ընտրութիւններու, եւ եթէ փորձէ իսկ՝ պիտի ընտրէ նախադրեալը միայն: Ինք չէ տէրը իր գլխուն, ինչպէս որ ինք չէ նաեւ տէրը իր կեանքին: Եթէ փորձէ ընել այդպէս՝ ըմբոստ մըն է անիկա եւ դատապարտելի՝ բոլոր պատիժներովը տէրունական եւ աշխարհիկ գիրքերուն եւ օրէնքներուն: Նախաինամութիւնն է տէրն ու իշխանը «ճակատագիր» կոչուած յղացքին, եւ ան է որ կշիռ կու տայ ամէն ինչի: «Արեւելքցի ենք եւ կը հաւատանք ճակատագիր ըսուած բանին»՝ կը հաստատէ Շահնուր տեղ մը. «բայց այդ ճակատագրին գլխադիրներն են միայն որ չինական մելանով են գրուած: Մնացեալը մատիտ է, մնացեալը քար է, մնացեալը փոշի է: Մեզի՛ կը մնայ այդ մնացեալը փոխել»⁴⁸: Շահնուրի նշած փոփոխութիւնը կ'ենթադրէ ինքնագիտակցութեան հետ կամք եւ ազատութիւն, այսինքն՝ տեսակ մը ըմբոստութիւն՝ անհատ մարդուն եւ անկէ կազմուող հաւաքականութեան կեանքի դրսեւորումին մէջ: Այսուհանդերձ՝ Շահնուր ցոյց չի տար ուղին այդ ինքնութեան, կամքին եւ ազատութեան տանող: Այդ մէկը կը տրուի ա'յլ հայ գրողի մը կողմէ: Ըստ անոր՝ «մարդկային ճակատագիրը ուղղակիօրէն կախեալ է իր մտաւորական ու զգացական զարգացումին ներդաշնակութենէն ու հաւասարակշռութենէն: Առանց այս պայմանին՝ մարդ արարածը դատապարտուած է սահիլ գահավիժօրէն մռայլ անդունդն ի վար»⁴⁹: Հոս ալ, սակայն, Ալլահվերտեան կը խուսափի ի'նչպէսէն այդ ներդաշնակութեան եւ հաւասարակշռութեան:

Եթէ ճշմարիտ են այս բոլորը՝ ուրեմն ինչպէս անհատ մարդը՝ նոյնպէս նաեւ անկէ կազմուած որեւէ հաւաքականութիւն՝ ճատրակի քար մըն է մատնեւորուն ներքեւ բնականէն անդին գտնուող գերբնական եւ բնազանցական այն ուժին, որուն համար աւելի յարմար ստորոգումի մը բացակայութեան՝ մարդկային լեզուն եւ միտքը գայն կոչեցին «աստուած», «արարիչ», «ստեղծագործ ուժ», «առաջին պատճառ», «շարժում», «արեւ»,

«լոյս», եւ նոյնանման այլ անուններով, եւ որուն կը թուի պատկանիլ վերջին խօսքը կեանքին ու մահուան, այսօրին ու վաղուան, բախտին ու ճակատագիրին, այսինքն՝ պատմութեան, եւ այս բոլորը՝ ի հակադրութիւն պատմագրութեան սկզբունքներուն, մարդկային հոգեբանութեան եւ անոր իմացական կարողականութեան իսկ:

Հոս՝ ա՛յլ գործ չունի անհատը, որ արարեալ մըն է լոկ, ցեխ ու կաւ, թոյլ ու կամազուրկ եւ անհեռանկար արարած մը, որ կը գտնուի իրեն համար ի վաղուց անտի հաստատուած, անփոփոխ եւ անրեկանելի մականին ներքեւ անհասանելի եւ անվերծանելի եղող արտաքին ուժի մը, եւ կը շնչէ, կ'ապրի ու կը տեւէ, կը գործէ ու կը մտածէ ո՛չ թէ իր ներաշխարհէն ժայթքող տենչ ու հրայրքով, կամք ու զիտակցութեամբ, ազատութեամբ եւ ինքնավարութեամբ՝ այլ վերէն իրեն պարտադրուածով եւ իրեն համար կատարուած սահմանումով: Ինք սահմանաւորն է եւ ենթակայ՝ անսահմանի մը կամքին, որ կը ճանչնայ ոչ մէկ փոփոխութիւն եւ յեղաշրջում եւ անհատներէ կազմուած հաւաքականութեան համար կը ներկայացնէ անիմանալի, անրնկայելի եւ անտարազելի ընթացք, գործելակերպ եւ էութեանականութիւն: Անոր էութեանական այս գործօնութիւնն է որ քաշ ու կշիռ պիտի տայ անհատին կամ հաւաքականութեան, եւ ուղղութիւն՝ կեանքի անոր քայլերուն եւ հորովոյթին: Այս է այն՝ ինչ որ է ճակատագիրը մարդուն, որ նախագծուած է եւ ճշդուած ի յառաջագունէ. թէ ի՞նչ նպատակ կը հետապնդէ անիկա եւ գոյութեան ի՞նչ իրաւունք կու տայ անհատին եւ հաւաքականութեան՝ չէ տրուած գիտնալ ռեւէ մէկուն: Այդ նպատակը տիեզերական է եւ աստուածային, եւ առ այդ՝ վեր մարդու եւ անով կազմուած որեւէ հաւաքականութեան հասողութենէն եւ գիտնալու կամ ճանչնալու իրաւասութենէն: Ահա թէ ինչո՞ւ համար անհատն իրաւունք չունի նոյնանալու այդ նպատակին հետ, որովհետեւ իր գոյութիւնն իսկ իրագործումն է այդ նպատակին, որ իրը չէ, եւ որուն հետ արտօնուած չէ իրեն կազմելու նոյնիսկ թեթեւագոյն գուգահեռը:

Վերլուծումի վերջին հանգրուանին՝ այս բոլորը կը նշանակեն մէ՛կ բան — ինչպէս անհատին՝ նոյնպէս նաեւ անհատներէ կազմուած հաւաքականութիւններուն կը պակսին իշխանութիւն եւ ինքնիշխանութիւն, կամք եւ ազատութիւն, ինքնորոշում եւ ինքնամղում, ներքին տենդ եւ հրայրք, այսինքն՝ ներմուղ այն ուժը, զոր իմաստասիրութիւնն այժմ կը կոչէ Էլան վիթալ, իսկ հայերէն բառամթերքը՝ ոգի:

Իրականութեան մէջ այսպէ՛ս է որ հաւաքականութիւնն ինքզինք կը զրկէ ինքզինք ըլլալու իրաւունքէն եւ սկզբնական եւ վախճանական պատճառականութենէն, այսինքն՝ կամքէն, որոնց կ'անգիտանայ ծանրութիւնը, եւ առ այդ՝ հեռու կը մնայ ընկալումէն կեանքի էութարանութեան, որուն կարկինին զոյգ թեւերը կը բացուին այդքա՛ն լայն, կը կենան իրար-

մէ այդքան հեռու, եւ կ'ընծայեն անոր կորագիծն այդքան անհասանելի եւ անպարագրելի՝ որ մարդկային միտքն ու զգայնութիւնը հազիւ թէ կարող կը դառնան մատչելու անոնց, տեսնելու լայնարաց հորիզոնն անոնց միջեւ, եւ ընկալելու յրացքը «սկիզբ» ու «վախճան» տարազներով գոյութեան կոչուած իրականութեան, եւ մանաւանդ՝ անոնց միջեւ ինկող ժամանակին, զայն առյցելու եկող դէպքերուն ու պատահարներուն, անոնց վէժ ու հիմ ծառայելու սահմանուած հող ու քարին, եւ անոնցմով գոյութեան իրաւունք զգեցած տարածքին, այսինքն՝ մարդկային գիտակցութեան մէջ եւ ճանաչողութեան՝ տեղ ու վայր, եւ միջոց ու ժամանակ ընդդրկող կեանքի այն հոսքին, զոր գիտութիւնը պատմութիւն կը կոչէ այսօր:

Իսկ, ի վերայ այս ամենայնի, կեանքի իմացքը շօշափելի ընծայելու եւ զայն իմաստաւորելու համար գոյութեան կոչուած անհատ ու շնչաւոր, գիտակից ու զգացական մարդուն չէ տրուած շտկել ու շտկուել ընթացքն այդ հոսք—պատմութեան, ուղղութիւն տալ անոր, եւ զայն սպասարկուն դարձնել կեանքին իմացքը դրսեւորող մարդուն, անոր մարդկային եւ այլ տեսակի նպատակին ու ծրագիրին, ընձեռել անոր բարիքն անհատական թէ հաւաքական իմացական, հոգեկան եւ ֆիզիքական կար ու կարողութեան, եւ այդ ձեւով զայն ընծայել ինքնակեդրոն եւ ինքնանպատակ, ինքնամուղ եւ ինքնաստեղծ, եւ ինքնավար ու ինքնաբաւ, որովհետեւ անոր՝ այդ անհատ մարդուն ի վերուստ չէ արտօնուած ըլլալ ինքնագոյ եւ ինքնագործօն, եւ դառնալ ինքզինք, ի՛ր ետը, ի՛ր հոգին եւ ի՛ր միտքը՝ պարզ այն պատճառով որ ինք չէ՛ ինքզինքը, ի՛ր ետը չէ՛ իր ետը, իր հոգին չէ՛ իր հոգին, եւ իր միտքը չէ՛ իր միտքը, այլ, ընդհակառակը, ինք պարունակն է անոնց, ու պարունակեալը կը պատկանի զայն պարունակողն ստեղծողին եւ արարողին, այսինքն՝ ուրիշին որ ինքը չէ, եւ բովանդակեալը՝ բովանդակողին, որ կը գտնուի իրմէ դուրս: Իսկ այդ պարունակողը, իսկ այդ բովանդակողը:

Սակայն անոնք ուժն են ու կամքը, գերբնական ուժն ու կամքը, որոնք մարդկային չեն բնաւ, եւ զորս մարդկային միտքն ու ընկալչութիւնը, եւ բառն ու բանը կը կոչեն «Աստուած»:

20.

Ահաւասիկ՝ գերբնական այս ուժն ու կամքն են որ կու գան իրաւ ընծայելու այն ինչ որ ձեւ ու մարմին պիտի տայ հաւաքականութեան, որ իրականութեան մէջ ո՛չ գումարն է անհատ մարդերուն եւ ոչ ալ հաշուարկումի ենթարկելի համախմբումը անջատ մարմին ու հոգի, եւ ես ու ոգի

ենթադրող բանական էակներու: Ընդհակառակը՝ անիկա ծնունդն է դար-
 րերու խմորումին, եւ ժամանակի հոլովոյթով ներքին պարունակ ու բո-
 վանդակութիւն եւ դիտակցական ես եւ ճանաչողական ուժ զգեցած եւ զի-
 րար որոնող եւ իրարու ձգտող, զիրար ամբողջացնող եւ իրարմով լիացող
 մարդերուն, որոնց հոգին ու միտքը, եւ եսն ու զգայնութիւնը կը շնչեն ու
 կը թրթռան միաձուլումի եւ մէկութեան ուղիի երկայնքին ձգուած լարին
 վրան ինքնաստեղծումին, կը տեւեն իրարու միասնութեան մէջ, կը զգան
 միահամուռ տենդով ու կը մտածեն միախորհուրդ. այսուհանդերձ, եւ հա-
 կառակ այս բոլորին, զայն կազմող անհատ մարդերը չեն դադարիւր ըլլալէ
 անջատ եւ իրարմէ հեռու ինկած էակներ, ինքնուրոյն արարած, իրարու
 զուգակից՝ այլ տեւորէն տարանջատ անձ, եւ ոչ մէկ ատեն իրարմով նոյ-
 նացեալ եւ համանոյն: Անոնց կեանք—Հոսքը, այսինքն՝ պատմութիւնը, որ
 ընդհանրականութեան եւ համապարփակութեան երեւոյթով տարատա-
 կուած դրսեւորումն է անոնց շնչառական առկայութեան՝ կը մնայ ինք-
 նիր մէջ, կ'ընծայուի ամբողջական պատկեր եւ իր անջատ ու տարբերա-
 կեալ դրուագներու իրարայաջորդութեամբ կը կրկնէ ինքզինք՝ առանց որ
 ապրումէ անցած իր օրերն ու ժամանակներն ըլլան կրկնութիւնը նոյնին,
 եւ իրեն եւ իր նմաններուն հաւաքական կեանքին եւ գոյութեան տան եթէ
 ոչ ներքին՝ գէթ արտաքին խորհուրդը մէկութեան:

Պատմութիւնը շարունակականութիւնն իսկ է եւ տեւականացումը՝
 հաւաքականութեան մը, ժողովուրդի մը եւ ազգի մը հին ու նոր արժէքնե-
 րուն եւ ժառանգին, եւ այլազան ու տարատեսակ դատումի անոր նժարին
 ու կշռաքարերուն, շարունակականութիւն մը եւ տեւականացում մը՝ որոնք
 կ'ենթադրեն որոշ տարափոխում՝ ներքին հիմնականները պահելով հան-
 դերձ: Ըստ Թովմաս Քարլայլի՝ անիկա եղափոխութիւնն իսկ է եւ լոկ յօ-
 րինուածային աճ մը, որ ինքզինք կը դասաւորէ շրջաններով ու կը կրկնէ
 որոշ յաճախականութեամբ: Ըստ մեծ անգլիացիին՝ յօրինուածային է ըն-
 կերութիւնը նաեւ եւ կ'ենթադրէ աճ ու զարգացում. իսկ յօրինուածքը որ
 կ'աճի՝ կեանքն իսկ է³⁰: Ինչ որ կու գայ հատածումի ենթարկելու շարու-
 նակական լինելութիւնը կեանքին ու պատմութեան եւ անոնց անյեղլի Հոսքը
 ժամանակէն ներս եւ տարածականութենէն արուեստական է եւ մարդա-
 կերտ, եւ առաւելագոյն պարագային կը ծառայէ յստակացնելու յարակ-
 ցութիւնները «անջատ» գէպքերուն եւ դիւրընկալ դարձնելու ճիգը պատ-
 մութեան ուսանողին՝ այն բոլորին համար որոնց ընկալչութենէն ներս չեն
 ինկած համապարփակութիւնը մատչումին եւ ընդհանրական թափանցումը
 եղածին ու կատարուածին: Պատմութեան հատածումի այս աշխատանքը
 ամէն բանէ առաջ կ'ենթադրէ ո՛չ միայն հեզասահ ընկալումն ու իւրացու-
 մը ուսումնառական եւ ասպարիզային նախապատրաստութեան մը՝ այլ
 մանաւանդ՝ մանրամասնութիւններէն ընդհանուրին եւ ընդհանուր ե-

րեւոյթներէն մանրամասնութիւններուն արժեւորումը եւ զնահատանքը:

Հաւաքականութեան մը պատմութիւնը թւումն մասանցը չէ անոր կեանքին եւ առօրեային առընչուող մանրամասնութիւններուն, անոնց իրարայաջորդութեան, այդ բոլորին ճշգրիտ եւ խորաթափանց գիտութեան, անոնց հետեւողական շարայարումին, յստակացումին եւ ստուգատես դըրսեւորումին, այլ մանաւանդ՝ այդ բոլորին հետ եւ անոնցմէ վեր՝ զգացողութիւնն ու զգայնութիւնը կեանքին եւ զայն կարելի ընծայող նշելի եւ աննշելի, գիտակցուած կամ յաճախ անգիտացուած ամենազգի բաներուն:

Պատմութիւնը չի՛ ճանչնար մոռացումներ, բացթողումներ, թողլքումներ եւ մասամբ նոցին՝, ոչ այ՛ անհանգրուան պատումը ղէպքերու, դրուագներու եւ պատահարներու: Ի վերջոյ՝ հաւաքականութեան մը կեանքն իսկ է պատմութիւնն անոր եւ կենսագրութիւնը, զորս յստակացնելու, պարզելու եւ ընկալելի ընծայելու եկող տուեալները ապրումէ անցած փուլերն են անոր՝ այդ հաւաքականութեան տեւականացումին ձգտող էլան վիթաւին եւ ներքին էութեանականութեան: Որեւէ հաւաքականութեան, ժողովուրդի եւ ազգի կենսագրութիւնը վկայութիւնն է ներքին այս ուժերուն, որոնք կը գործեն եւ ուղղութիւն կու տան անոր օրերուն, եւ մերթ կենդանութիւն եւ վերապրում՝ անոր ներքին եւ արտաքին կառոյցին: «Մեր ժողովուրդը»՝ կը հաստատէ Ստեփան Շահպազն իր մէկ գործին մէջ՝ «Իր երկար կեանքին տեւողութեան յաճախ ունեցաւ զժրախտութեան չըրջաններ, բայց ան չսայթաքեցաւ, չմեղանչեց, տեղի չտուաւ երբեք: Իր ճակատը միշտ բարձր բռնեց, եւ մի՛շտ այլ վերապրեցաւ:

«Մեր վերապրումը իրական «հրաշք» մըն է: Բոլոր դարերու բոլոր քաղաքակրթութիւններու՝ իրական, ամէնէն փայլուն ու անկասկածելի հրաշքներէն մին: Բայց տակաւին բոլորովին չբացատրուած երեւոյթ մը, իրողութիւն մը. այս իսկ պատճառով զայն հրաշք կը կոչենք»⁵²:

Հրաշք կամ ոչ՝ պատմաբանն է որ զայն պիտի հանէ սեղան, լուծէ եւ վերլուծէ, կեդրոնանայ ընդհանուրը կազմելու եկող մասնաւորներուն վրայ, զնայունէն, լոյսին բերէ մնայունը, եւ օրերուն ու ժամանակին իմաստ ու բովանդակութիւն տալու եւ զանոնք շօշափելի ընծայելու եկած յարդ ու խարի հսկայ շեղջերէն դուրս հանէ ոսկի հատիկը ցորեանին: Ան է որ պիտի դատ ու դատումէ անցընէ եղածն ու պատահածը կեանքի բոլոր երեսներուն, ճշդէ ու ճշգրտէ անոնց ուժն ու զօրը եւ տոկունութիւնն ու իրաւութիւնը, կատարէ ստորոգումն անոնց եւ դասէ ու դասաւորէ անոնց դրականն ու ժխտականը, կարեւորն ու անկարեւորը, առաջնայինն ու յետնայինը, պատճառն ու հետեւանքը, զանոնք իրական ընծայող դերակատարները, եւ փորձաքարի զարնէ այդ բոլորը եւ անոնցմով առկայութեան հասած տուեալները, որոշէ անոնց տեղն ու դերը, եւ կատարէ ընտրութիւնն անոնց, դասդասէ ընտրեալները, եւ ապա՝ ներքին շնչառութեամբ

մը իրարու ազուցուած այդ տարրերուն շարադրանքով տայ ո՛չ միայն ներքին մթնոլորտն ու հոգեխառնութիւնը եղածներուն՝ այլ հասնի որոշ եզրայանգումի, այսինքն՝ խառնամրոխ տարրերէն ստեղծէ դասաւորեալ եւ ընկալելի դարձած մէկ կենսագրութիւնը հաւաքականութեան:

Պատմութիւնը կենսագրութիւնն է հաւաքականութեան, իսկ պատմագէտը՝ կենսագիրն անոր. ան է որ պիտի լոյսին բանայ գաղտնարաններն անոր հաւաքական կեանքին, ներքին մրրկումներուն, տազնապներուն, գայթումներուն, անկումներուն եւ թռիչքներուն: Անիկա կրնայ ըլլալ ժամանակակիցն ու վկան դրսեւորուող հարցերուն, դէպքերուն եւ դէմքերուն: Երկու տարածքի վրան ապրումէ անցած հաւաքական եւ մեծնապարփակ կեանքն է որ պիտի վերբերէ անիկա: Արտաքին վերբերումի պարագային՝ անիկա պարզ պատմողն է եղածին ու պատահածին, եւ կրնայ հասնիլ մինչեւ սահմանները հեքիաթին եւ երեւակայական պատումին: Հոս կը գործէ սուտին գեղեցիկը, եւ հակառակը՝ գեղեցիկին սուտը նաեւ: Մինչ ներքին վերբերումի պարագային՝ իմաստասէրն է անիկա, որ կ'աշխատի իջնել խորերը դէպքերուն եւ պատահարներուն, կապտել միջուկն անոնց, եւ զանոնք անցընելով իր իսկ հոգիին պրիսմակէն եւ իմացական բովէն՝ կը փորձէ պատասխանել «ի՞նչպէս»էն առաջ «ինչո՞ւ»ին անոնց: Այս պարագային անիկա կրնայ մեկնիլ ու հասնիլ մինչեւ ամբողջ երազատեսութեան եւ իրեն տրամադրելի տուեալներով ու փաստերով յանգիլ որոշ եզրակացութիւններու, որոնք միշտ չեն որ կրնան տոկալ քննութեան: Իրաւ պատմաբանը մարդն է ճշմարտութիւններու ստուգատես խղճմտանքին:

Իրաւ է, որ ժողովուրդի մը պատմութիւնը դրսեւորումն է անոր ներքին կենսագրութեան, այսուհանդերձ՝ որպէսզի այդ մէկն ըլլայ ընկալելի եւ լուսարանուած՝ անոր օժանդակելու պիտի գան տարրերն անոր արտաքին կենսագրութեան:

21.

Իսկ պատմաբանն ու պատմագէտը միշտ չեն որ քաղաքագէտ են ու ղիւանագէտ, որովհետեւ տարրեր կրթանքներ են անոնցիները, եւ ուրիշ անոնց դերն ու պաշտօնը, ի՞նչ փոյթ որ մերթ անոնք ըլլան զուգընթաց՝ այլ ո՛չ նոյնը: Մէկը օժանդակն է միւսին, սակայն ո՛չ զայն փոխարինողը: Չկան զիրար փոխարինողներ ինչպէս կեանքէն ներս եւ անոր խոր ու թեթեւ ապրումներէն՝ նոյնպէս նաեւ հաւաքականութեան մը պատմութեանէն, ահա թէ ինչո՞ւ համար զիրար չեն փոխարիներ, եւ չեն ալ կրնար փոխարինել արդէն, պատմութեան ուսանողն ու ղիւանագէտ—քաղաքագէտը: Մէկը կը վերբերէ երէկը, իսկ միւսը՝ ներկան. մէկը կը խրի անցեալէն ներս,

իսկ միւսը՝ գալիքէն. եւ մէկը կը լուծէ ու կը վերլուծէ, ու կը դատէ ու դատաստանէ կ'անցընէ եղածը, մինչ միւսը՝ կը ծրագրէ եւ կը դասաւորէ իրագործումն ըլլալիքներու: Առ այդ՝ մէկը կը մատչի երէկի իրականութիւններուն, իսկ միւսը՝ վաղուան կատարուելիքներուն: Մէկը կ'ապրի երէկէն ներս գինք նախորդող սերունդներուն եւ անոնցմով կազմուած հաւաքականութիւններուն, մինչ միւսը՝ երազէն ներս գալիքին: Այս իսկ պատճառով՝ մէկը ներկայացնողն է անցած ու անդարձ մեկնած ժամանակը, մինչ միւսը՝ չեփորահարը վաղուան:

Ժամանակին եւ սերունդներուն ստորոգում պարզեւող «երէկ»ն ու «վաղը»ն փաստօրէն եւ հիմնականին մէջ կը կիսեն պատմութիւնը հաւաքականութեան, եւ անկէ կը ստեղծեն երկու հատածումներ. անոնցմէ առաջինը հիմնաքարն է երկրորդին, մինչ երկրորդը՝ կառուցն այդ առաջինին վրան բարձրանալիք, այսինքն՝ առաջինը որ «երէկ»ն է՝ առաջին պատճառն է երկրորդին՝ որ հետեւանքն է եւ «վաղը»ն. այս իսկ հանգամանքով՝ արարիչն է առաջինը, եւ արարեալը՝ երկրորդը, այսինքն՝ «մէկը»ն եւ «միւսը»ն, որոնք երբեք ալ չեն ենթադրեր ստորոգումի նոյն յղացքը, եւ չեն ալ ընծայուիր համատեղելի, ի՞նչ փոյթ որ անոնք անմիջականօրէն առնչուին իրարու, կը կենան նոյն ընկալումներուն վրայ տիեզերական, մարդկային եւ իմացական ժամանակներուն, եւ յաճախ կը չփոթուին իրարու հետ:

Հաւաքականութեան մը պատմութեան խորք ու տարածք, իմաստ ու ընկալում, գործ ու գործօնութիւն պարզեւող բառային այս եզրերը կըրնան չփոթուիլ իրարու հետ, կամ ընդհակառակը՝ մնալ իրարմէ անջատ, սակայն երկու պարագային ալ՝ անոնք կ'առնչուին միեւնոյն ժամանակին, եւ կ'ընծայուին անոր երկու տարբեր դրսեւորումները, որոնց առկայութիւնը ծնունդն է մարդկային բանականութեան:

Իսկ ինչ որ չ'ենթարկուիր բանականութեան՝ անընկալելի է արդէն: Այդպէ՛ս են անհատ մարդը, անկէ կազմուած հաւաքականութիւնը, անոր առկայութեան երկարած գումը ժամանակէն ներս եւ տարածային ընկալումէն ժամանակին, եւ այդ բոլորէն վեր՝ անհատին եւ հաւաքականութեան ներքին ուժը որ լինելութիւն կը պարզեւէ մարդուն եւ գոյացութիւն՝ անչունչ իրերուն եւ տարրերուն:

Եւ արդէն՝ այն ինչ որ չ'իյնար պարունակէն ներս բանականութեան՝ կը մնայ դուրս ապրումէ եւ կեանքէ, այսինքն՝ պատմութենէն: Իսկ պատմութիւնը կեանքն իսկ է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Այս մասին տես՝ Geoffrey Barraclough, "Scientific method and the work of the historian," in *Basic Problems of Philosophy* (Daniel J. Bronstein, Yervant H. Krikorian, Philip P. Wiener, eds.), Englewood Cliffs, M.J., 1964, pp. 209-210: Ասկէ ետք կը նշուի որպէս *Basic Problems*.
2. Հնոս իմաստային իրենց պարզագոյն ձեւին մէջ կը վերցուին «դիւանագէտ» եւ «քաղաքագէտ» յղացքները, ահա թէ ինչո՞ւ համար նոյն մատչումի կ'ենթարկուին «քաղաքականութիւն» եւ «դիւանագիտութիւն» բառային տարազները, թեպէտես վերլուծումի վերջին հանգրուանին ամոնք կը զգենուն իմացական հիմնովին տարբեր բովանդակութիւն: Պարզ ընծայելու համար ընկալու՞մը հարցին՝ հոս սա գուզակցումը կը դնենք հաւասարութեան եւ նոյնիմաստութեան հորիզոնականին վրայ:
3. Այս մասին տես՝ Hans J. Morgenthau, *Politics Among Nations: The Struggle for Power and Peace*, New York, 1973, pp. 517-518: Ասկէ ետք կը նշուի որպէս Morgenthau:
4. Հնոս քաղաքական իրավաչաշտութեան տուեալներով է որ կը փորձուի դրսեւորել նկարագիրը քաղաքագէտին եւ դիւանագէտին, ահա թէ ինչո՞ւ համար անհրաժեշտ է այս կէտին վրայ նոյնացնել զանոնք եւ ոչ թէ գուզահեռներ գծել անոնց միջեւ, այլ մասնատանջ՝ հաւասարութեան նշաններ: Ի՞ վերջոյ, վերլուծումի վերջին հանգրուանին, քաղաքական յայտագիր մը արտայայտութիւնն է զայն պատրաստողին եւ պատրաստողներուն ներքին մտայղացքին:
5. Morgenthau, pp. 4-11.
6. «Ժողովուրդ» եւ «ազգ» յղացքներուն համար մանրամասն տես՝ Լեւոն Վարդան, ««Ժողովուրդ» եւ «ազգ» բառերու եզրային առընչութիւններուն մասին», *Քաղաքագիտ. հտ. ԾԾԴ*, քիւ 1-4, Վենետիկ, 1996, էջ 46-63:
7. Morgenthau, p. 103.
8. Peter Gay, "The history of history", *Dialogue*, vol. 3, No. 3, Washington, D.C., 1970, p. 100.
9. Այս կէտին մէկ վերլուծումին համար տես՝ Charles S. Peirce, *Collected Papers*, vol. V, Cambridge, 1934, pp. 245-247.
10. Այս մասին տես՝ Thomas Hobbes, *Leviathan*, Oxford, 1943, pp. 99-100.
11. John Dewey, "Does human nature change?" in *Basic Problems*, p. 120.
12. Kahlil Gibran, *The Prophet*, Melbourn/London/Toronto, 1951, p. 45.
13. Այս մասին տես՝ Georg William Friedrich Hegel, *Introduction to the Lectures on the History of Philosophy*, Oxford, 1988, pp. 75-76, 172-173.
14. Այս բոլորին մանրակրկիտ մէկ վերլուծումին համար տես՝ Sidney Hook, *The Hero in History*, Boston, 1955, pp. 229-245.
15. Philip P. Wiener, "Philosophy of politics and history: Introduction," in *Basic Problems*, p. 151.
16. Հնոս «դիւանագիտութիւն» տարազը կ'ամնուի իր պարզագոյն յղացքին մէջ: Ըստ Մալխասեանցի՝ անիկա «հմտութիւն[ն է] միջազգային յարաբերութիւնների, իր պետութեան շահերի՝ օտար պետութիւնների հետ հաղորդակցութեան մէջ», տես՝ Ստ. Մալխասեանց, *Հայերէն Քաղաքական Բանաստեղծութեան*, հտ. Ա., Պէյրոս, 1955, էջ 525: Իր կարգին՝ անգլիական Ռեյսթրոնը կը հաստատէ, թէ «ազգերու միջեւ երկուստեք գոհացուցիչ պայմաններու համար բանակցութիւններ վարելու արուեստն ու գործունէութիւն[ն է անիկա], տես՝ *Webster's Third New International Dictionary of the English Language Unabridged*, Springfield, Mass., 1996, p. 638: Ասկէ ետք կը նշուի որպէս *Webster*.
17. Jacques de Launay, *Histoire contemporaine de la diplomatie Secrète, 1914-1945*, Lausan-

- ne, 1965, p. 506-507.
18. Johnathan P. Seat, *Five Weeks: The Surge of Public Opinion on the Eve of the Great War*, vol. I, New York, 1925, p. 3.
 19. Vico, *Selected Writings*, Cambridge/London/New York, 1982, pp. 255-267.
 20. Werner Mark, *The Philosophy of F.M.J. Schelling*, Bloomington, 1984, pp. 1-32, 58-83.
 21. *Auguste Comte and Positivism: The Essential Writings*, Chicago/London/, 1975, pp. 52-56.
 22. Herbert Spencer, *First Principles*, New York, 1909, pp. 253-256, 286-292.
 23. Benedetto Croce, *History: Its Theory and Practice*, New York, 1923, pp. 51-63.
 24. Giovanni Gentile, *Genesis and Structure of Society*, Urbana / London, 1966, pp. 98-108, 121-134, 166-173.
 25. Ըստ Մխիթարեան Հայերուն՝ պատմաբանը «պատմող բանի»ն է. այսինքն՝ «պատմիչ»ը. իսկ անոնք չեն ճանչնար «պատմագիր»ը: Տես՝ **Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի**, հտ. Բ., Վեներիկ, 1837, էջ 615: Մալխասեանցին համար անիկա «մեկի կեանքը պատմող, կենսագրութիւնը գրող, [եւ] պատմիչ»ն է: Տես՝ Ստ. Մալխասեանց, **Հայերէն Բացատրական Բառարան**, հտ. Գ., Պէյրոս, 1956, էջ 68: Յետագայի բառակերտում է «պատմագիր» տարազը, որուն որպէս բացատրութիւն Մալխասեանց կու տայ «պատմութեան՝ պատմական գրականութեան մասնագէտ. պատմական հարցերով զբաղող» եզրաբանութիւնը: Տես՝ Մալխասեանց, նոյն: Ինչ որ ալ ըլլան տարբերութիւններն անոնց մերթիւն բովանդակութեան՝ հոս անոնք կ'օգտագործուին որպէս նոյնիմաստ յոսքք եւ բոլորովին կը տարբերին «պատմագիր»էն, որ «պատմութիւն գրող[ը], պատմութեան հեղինակ[ն]» է: Տես՝ նոյն: Այս բոլորէն ետք, սակայն, անգլիական մեծ բառարանը կը հաստատէ, թէ «պատմաբանը պատմութիւն գրող է, մասնատրապետ մէկը որ կ'արտադրէ գիտական համադրութիւն մը, որ կը տարբերի հաւաքածոյէ մը կամ ժամանակագրութենէ», իսկ պատմութիւնը «համակարգուած կերպով գրուած պատում մըն է, որ կը բաղկանայ դէպքերու ժամանակագրական արձանագրութենէն (որ կ'աղբնչուի քաղաքին, պետութեան, ազգին, [անոր] կառոյցներուն, գիտութեան եւ արուեստին) եւ ընդհանրապէս ունի իմաստասիրական բացատրութիւն մը այսպիսի դէպքերու պատճառին եւ սկզբնատրութեան մասին, [եւ] ընդհանրապէս կը զանազանուի տարբերութիւններէն եւ ժամանակագրութիւններէն»: Տես՝ *Webster*, pp. 1073, 1073-1074.
 26. Անգլերէն լեզուին կը պակսի համահասարակ հայերէնի «պատմագիր»ին, ահա թէ ինչո՞ւ: Ելեզինկէր առանց իսկ մտահոգուելու տարբերութիւններովը «պատմաբան»ին եւ «պատմագիր»ին կ'օգտագործէ անգլերէն լեզուի միակ բառը՝ *historian*ը, որուն մերթ որպէս համապատասխան կը տրուի *historiographer*ը, որ, իրականութեան մէջ, անհատ մըն է «որուն պարտականութիւն է տրուած գրելու պատմութիւնը կամ արձանագրելու շարունակուող պատմութիւնը երկիրի մը, հաւաքականութեան մը, կամ հաստատութեան մը այսինքն՝ անիկա «պաշտօնական պատմաբան» մըն է: Տես՝ *Webster*, 1073:
 27. Arthur M. Schlessinger, Jr., "Historians as participants," *Dialogue*, vol. 8, No. 1, Washington, D.C., 1975, p. 48.
 28. Suren Zolian, "Conflict as logico-semantic problem," *Synopsis*, vol. 5, *Encounter of Cultures: From Collision to Dialogue*, (Hamlet Gevorgian, ed.), Yerevan, 1995, p. 96.
 29. Կառլէն Միրումեան, «Հայ ազգային մտքի ուսումնասիրութեան ելակետային մեթոտաբանական հասկացողութիւնների մասին (հարցադրման կարգով)», **Հայ Իմաստասիրութիւնը Հոգևոր Մշակոյթի համակարգում** [Կառլէն Միրումեան, խմբ.], Պրակ երկրորդ, Երեւան, 1995, էջ 17-18:

30. Հոս «մշակոյթ» տարագն արդէն դուրս է իր գեղարուեստական հմայքէն, ու կը ներկայանայ որպէս դրսեւորումը հաւարականութեան մը ազգային յիշողութեան, ի՞նչ փոյթ որ Ալլահվերտեան գայն գետեղած ըլլայ յղացքէն ներս լոկ գեղարուեստին, ու մանաւանդ՝ գրականութեան:
31. Հայկ Ալլահվերտեան, *Մեծերը...*, Պէյրոս, 1996, էջ 82:
32. Տես՝ Գարեգին Կարողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Հրատարակչութեան կողմից», *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, Ա. տարի, 1948, Անթիլիաս, [էջ գ.]:
33. Robert Ambelain, *La vie secrète du Saint Paul*, Paris, 1972, p. 19. այս բոլորի մասին, սակայն, մանրամասն տես՝ Barraclaugh, in *Basic Problems*, pp. 206-216:
34. Հերոսին աստուայնութենէն ետք վերադարձ մը մարդեղինութեան այլ բան չէ եթէ ոչ անկումն անոր: Ըստ ակադեմիկոս Յովսէփ Օրբելիին՝ «Երբ ժողովրդի յոյսերի, ձգտումների ու երազների մեծ մասը իբրև կանոն չէր իրականանում՝ հերոսի հզօրութիւնն ու անխորտակելի ուժը թուլանում էին որեւէ ձեւով, եւ նա զոհ էր գնում չարին: «Եթէ ժողովրդի սէրով ստեղծուած պայծառ հերոսները խոցելի տեղ չունենային՝ ապա նրանք իրենց երկրային կեանքում պէտք է մնային անմահ, վայելէին յաղթողների լիակատար փառքը: Սակայն ժողովուրդը, ինչ ամուն էլ նա կրէր, գիտակցում էր, որ լիակատար յաղթանակի օրը տակաւին չի հասել, եւ մարտնչող հերոսները պէտք է ընկնեն չար ուժերից, պէտք է խոցելի տեղ ունենան, որտեղից եւ նրանց կը հարուածի բշտամին»: Տես՝ Յովսէփ Օրբելի, «Նախարարան», *Մասունցի Գաւիթ – Հայկական Ժողովրդական Էպոս*, Երեւան, 1961, էջ LVI:
35. Ալլահվերտեան, էջ 88–89:
36. Hook, p. 154.
37. Eric Bentley, *A Century of Hero-worship*, Boston, 1957, p. 263.
38. Docteur André Gros, *La reconstruction de l'homme*, Paris, 1956, p. 26-27.
39. Նոյն, էջ 5–8:
40. Gay, p. 108.
41. Լենդրուշ Խորշուտեան, *Հայկական Հարցը*, Երեւան, 1995, էջ 81:
42. Հակատակ որ նոյնանման ըլլալ կը թուին զոյգ մը այս բառ–կապակցութիւնները՝ հոս, անոնց վերլուծումի աւարտին, կարելի է ըլլայ գտնել, որ անոնք իրարմէ բոլորովին տարբեր յղացքներ են, եւ որպէս այդպիսին ալ՝ իրարմէ կը տարբերին իրենց աշխատանքին եւ գործօնութեան շեշտերը: Ասկէ՝ նաեւ այն անգուգորդելի ինքնութիւնն ու իրողութիւնը, զորս կը ներկայացնեն անոնք:
43. Այս մասին մանրամասն կերպով տես՝ Haig Khatchadourian, "Common names and "family resemblances", *Philosophy and Phenomenological Research*, vol. XVIII, N^o. III, March, Buffalo, 1958, pp. 341-358.
44. Այս բոլորին մանրամասն մէկ վերլուծումին համար տես՝ William James, *Pragmatism*, London/Bombay/Calcutta, 1907, pp. 139-140, 148-149:
45. Robert Ambelain, *Les lourds secrets du Golgota*, Paris, 1974 p. 71.
46. Պատճառականութեան եւ անոր մարքսեան մէկ քննարկումին համար տես՝ «Պատճառականութիւն», *Փիլիսոփայական Բառարան*, Երեւան, 1975, էջ 338–339:
47. Լեւոն Աբրահամեան, «Ազգային ինքնութիւնը որպէս պրոցէս», *Ինքնութիւն*, հտ. 1, Երեւան, 1995, էջ 26:
48. Շահան Շահնուր, *Նահանգը Առանց Երգի*, Պէյրոս, 1981, էջ 178:
49. Ալլահվերտեան, էջ 36:
50. Bentley, p. 34.
51. Թուրք հրատարակիչ Ռակիբ Զարարդուն կը հաստատէ, թէ «ՄՍՈՄՆ 40 տարի ուրազաւ Քարինի ջարդը, սակայն անիկա այսօր վէճ չվերցնող իրականութիւն մըն է»: Տես՝ Varoujan Mardikian et Raffi H. Araks, "Un entretien avec Ragip Zarakolu, journa-

liste, co-directeur de la maison d'edition turque *Belge*", *La lettre de l'UGAB*, no. 87, 1 juillet 1995, p. 3: Իր կարգին՝ Շորճ Վզոննսրին կը գրէ, թէ Վոլկայի ափին հաստատուած գերման գաղթականներուն դէմ կատարուեցան կարգ մը ցեղասպանական արարքներ 1937ին, որոնց մասին, սակայն, բացարձակ լռութիւն կը պահեն սովետ պաշտօնական աղբիւրները: Տես *Genocide in the USSR: Studies in Group Destruction* [Nikolai K. Dekker and Andrei Lebed eds.], Munich, 1955, p. 78: Իսկ ընդհանրապէս Սովետական Միութեան մէջ կատարուած ցեղասպանութիւններուն համար տես՝ նոյն, էջ 35-152:

52. Ստեփան Շահպազ, *Մենք Հայերս*, Պէյրոս, 1959, էջ 102:

L.V.

ON HISTORY, HISTORIOGRAPHY AND VARIOUS RELATED PROBLEMS

(Summary)

✦ LEVON VARTAN

This paper is an endeavour to focus on different ideas and concepts and their relationship with sundry components of Armenian vocabulary which bear upon the individual and society, government and law, freedom and rights, liberty and responsibility and duties, and the communal existence and separate self of the individual in the conglomeration of society; it also discusses the time element in the forming of history and politics, the psychological, spiritual, cultural and intellectual make-up of the individual concerned with history and politics, of his collective and national memory, and of his identification with society and communal life.

In the presentation and discussion of the latter care has been taken to pinpoint not only the individual and the hero in the concept of time, society and history, but also an analysis is made of what is usually accepted as collective self and ego and their various ways of expression both natural and supranatural, of their relationship with variegated currents of thought and philosophy, metaphysics and the absolute, the abstract and the tangible, the First Cause and Causality, and Fate and fatality; moreover, stress is put upon the fact that man and his power of cognizance are of prime importance and present the foundations and bases of things of which society is composed, and history is nothing but the biography of man and the society, while historians are just biographers of man and his yesterday, of his national memory and identity, of his forward thrust towards the realization of his self, and of his individual, communal and distinctly national characteristics.